# ԵԼԻՑ ԳՐՔԻ ԺԲ ԳԼԽԻ ՄԻ ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Շղթայ (լատ. catenae, յուն. σειραί) մեկնութիւններ էին կոչւում միջնադարում եկեղեցական հեղինակների երկերի քաղուածքներից կազմված ժողովածուները, ընդորում քաղուած հատուածները մեկնաբանում էին միեւնոյն թեման միեւնոյն տեսակէտից, եւ կապուած էին մէկը միւսին՝ շղթայի օղակների նման: Այսպիսի հաւաքածուներով հարուստ է յատկապէս բիւզանդական գրականութիւնը: Ցրուած լինելով աշխարհի ձեռագրապահոցներում, շղթաները դեռեւս լիովին ուսումնասիրուած չեն: Բազմաթիւ շղթաների կազմուելու ժամանակի, հեղինակների, աղբիւրների, ներքին կառուցուածքի, փոխառընչութիւնների, արժէքի եւ գրականութեան այս տեսակի ընդհանուր նշանակութեան խնդիրներն առայժմ գտնում են միայն ամենաընդհանուր լուծումներ: Այս տեսակի սոսկ գոյացումը աստուածաբանական մատենագրութեան մէջ մատնում է ինքնուրոյն մտքի սպառումը, որ սկսուեց Ե. դ. երկրորդ կեսին: Պարզ է, որ շղթաների զուտ գրականագիտական-գեղագիտական արժէքը շատ չնչին է: Շղթայի հեղինակին է պատկանում միայն կառուցուածքը եւ հատուածների ընտրութիւնը, իսկ հետագայ վերամշակողները յաճախ բաւարարւում էին այդպիսի ծաղկաքաղների օգտագործմամբ: Սակայն շղթաները աւանդում են հին հեղինակների երկերի մնացորդները. շատ յաճախ հենց շղթաների միջոցով մեզ են հասնում անհետ կորած բնագրերի պատառիկները: Բայց եւ այստեղ զգուշաւորութիւն է պահանջւում. շղթաները յաճախ պարունակում են կեղծանուն հատուածներ, կամ հեղինակների անունները տեղաշարժւում եւ շփոթւում են ընդօրինակողների մեղքով: Ուստի պահանջւում է բնագրագիտական մանրակրկիտ աշխատանք շղթայ-մեկնութիւնը պիտանի աղբիւր դարձնելու համար՝ նմանատիպ բովանդակութիւն ունեցող շղթաների իմացութիւն, արդէն հրապարակած վաւերական աղբիւրների հետ համեմատութիւն, շղթայի հեղինակի աշխատելու մեթոդի դիտարկում եւ այլն:

Բովանդակութեամբ շղթաները լինում են՝ դաւանաբանական, մեկնողական եւ ճգնաւորական:

*Դաւանաբանական.* պարունակում են Եկեղեցու հայրերի մտքերը այս կամ այն վարդապետութեան վերաբերեալ: Գործածւում էին բանավէճերի եւ եկեղեցական ժողովների ժամանակ:

*Մեկնողական.* բիւզանդական շղթաների մեծ մասն են կազմում: Սովորաբար անանուն են, դժուարութեամբ են թուագրւում, բայց երբեմն դրանց մէջ հնարաւոր է յստակ խմբաւորում կատարել:

*Ճգնաւորական* (քրիստոնէական ծաղկաքաղեր). պարունակում են հատուածներ Սուրբ Գրքից եւ եկեղեցական հեղինակներից՝ առաքինութիւնների եւ մեղքերի, պարտքի եւ կրօնաւոր կեանքի, վարժութիւնների, եւ, ընդհանրապէս, բարոյականութեան մասին: Երբեմն քաղուած են միայն մէկ հեղինակից (Աստուածաբան, Բարսեղ եւ այլն): Այս տեսակ շղթայ-մեկնութիւնները կազմւում էին մինչեւ Ժ. դ. եւ սովորաբար անանուն են[1]:

1 Տե՛ս **K. Krumbacher**, Geschichte der Byzantinischen Literatur von Justinian bis zum Ende des Oströmischen

Հայկական շղթայ մեկնութիւնները գրեթէ ուսումնասիրուած չեն, թէեւ քիչ չեն այդ ժանրին պատկանող երկերը: Այսօր յայտնի են՝ Գրիգոր Նարեկացու, Վարդան Արեւելցու, Գրիգոր Տաթեւացու «Երգ Երգոցի» մեկնութիւնները[2], Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը»[3], Վարդան Արեւելցու «Հնգամատեանի մեկնութիւնը», Եսայի Նչեցու, Վարդան Արեւելցու, Առաքել Սիւնեցու, Յովհաննէս Երզնկացի Պլուզի, Յովհաննէս Ծործորեցու, Գրիգոր Մագիստրոսի «Քերականի», այսինքն՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստի» մեկնութիւնները[4], ինչպէս նաեւ առաքելական թղթերին վերաբերող՝ Շառլ Ռընուի հրատարակած մի քանի շղթայ-մեկնութիւնները[5]:

Մեր ուսումնասիրութեան առարկայ շղթայ-մեկնութիւնը մեզ է հասել ՄՄ թիւ 631[6] եւ ՄՄ թիւ 1247 ձեռագրերում գտնուող գրչագիրներով:

Վենետիկի թիւ 499 ձեռագրում զետեղուած *Ի հինգշաբաթի սրբոյն Մարութայի* վերնագրով գրչագրի սկզբնատողերն ու վերջնատողերը[7] թոյլ են տալիս կարծելու, որ դա մեր բնագրի երրորդ գրչագիրն է, բայց այն մեզ անմատչելի է:

ՄՄ թիւ 1247 (ԺԳ դ.) ձեռագրում գտնուող Ա գրչագիրը մաս է կազմում Աւագ Շաբաթին նուիրուած քարոզ-մեկնութիւնների ժողովածուի՝ որպէս Աւագ Հինգշաբթիի շղթայ-մեկնութիւն.

246բ-259բ *Ի գալստեան Տեառն յԵրուսաղէմ* :
260ա-265բ *Մեծի Բ շաբաթին* :
265բ-285ա *Մեծի Գ շաբաթին* :
285ա-286բ *Ժողովումն բանից սուրբ հարցն* :
286բ-290բ *Մեծի չորեքշաբաթին* :
**290բ-321ա *Մեծի հինգշաբաթի նորոյն Մարութայի* :**
321ա-8ա *Մեծի ուրբաթի. Յոհաննու Ոսկեբերանի* :

---

Reiches (527-1453). Zweite Auflage, hearbeitet unter Mitwirhung von A. Ehrhard und H. Gelzer, München, 1897, SS. 206-218 (§ 91: Katenen).

2 Այս մեկնութիւնների մասին աւելի մանրամասն տե՛ս **Լ. Յովսէփեան**, Աստուածաշնչի «Երգ Երգոց» գրքի միջնադարեան հայկական մեկնութիւնները, Եր., 2004 (մեքենագիր):

3 Տե՛ս **Լ. Խաչիկեան**, Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը», Եր., 1992:

4 Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Գ, Ծանօթագրութիւնները Օ.Վարդազարեանի, Եր., 2008, էջ 434-435:

5 Տե՛ս **Ch. Renoux**, Les chaînes armènienne sur les épîtres catholiques, 1. La chaîne sur l'épître de Jacques. Brepols Turnhout. 1985. (Patrologia Orientalis, Tome 41 Fasc. 1, N 193); Idem, Les chaînes armènienne sur les épîtres catholiques, 2. La chaîne sur les épîtres de Pierre, Brepols Turnhout. 1987. (Patrologia Orentalis, Tome 44 Fasc. 2, N 190); Idem, Les chaînes armènienne sur les épîtres catholiques, 3. La chaîne sur la premier épître de Jean. Brepols. Turnhout. 1994. (Patrologia Orentalis, Tome 46 Fasc.1, N 205-206); Idem, Les chaînes armènienne sur les épîtres catholiques, 4. La chaîne sur 2-3 Jean et Jude. Brepols. Turnhout. 1996. (Patrologia Orientalis, Tome 47 Fasc.2, N 210):

6 Շղթայի այս գրչագրի առաջին հիշատակումը տե՛ս **О. С. Вардазарян**, Филон Александрийский в восприятии армянского средневековья. К вопросу об истоках традиции, Ереван, 2006, էջ 119, ծանօթ. 22:

7 Տե՛ս **Սահակ վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, էջ 206:

ՄՄ թիւ 631 (ԺԴ. դ.) ձեռագրում գտնուող Բ գրչագիրը նոյնպէս շրջապատուած է Աւագ Շաբաթի հետեւեալ օրերին նուիրուած մեկնութիւններով.

136բ- 58ա. [*Վահրամայ վարդապետի ասացեալ*] *ի խորհուրդ Գալստեան Տեառն*

*յԵրուսաղէմ յաւանակաւ* :

**159ա-80ա. *Ի գալն Պասէքին ասացեալ սուրբ վարդապետաց* :**

180ա-95ա. [*Վասն թաղման Մեծի Շաբաթ աւուրն պեսութեան* ]:

Մեկնութիւնը գրչագրում վերնագրուած է՝ «***Մեծի հինգշաբաթի*** *նորոյն Մարութայի*», Բ ձեռագրում՝ «***Ի գալն սուրբ պասէքին***՝ *ասացեալ սուրբ վարդապետաց*», իսկ Վենետիկի N 499 ձեռագրում՝ «***Ի հինգշաբաթի*** *սրբոյն Մարութայի*»:

Ինչպէ՞ս կարելի է բացատրել խորագրերի այս տարբերութիւնները:

Ելից ԺԲ գլուխը, որը դրուած է ուսումնասիրուող մեկնութեան հիմքում իբրեւ բնաբան՝ որպէս Հայոց Եկեղեցու արդի Ճաշոցի ընթերցում, գտնւում է ոչ թէ Աւագ Հինգշաբթիի, այլ Աւագ Շաբաթի կարգի մէջ[8]: Հայկական ձեռագրերում պահպանուած Երուսաղէմեան Ճաշոցը վկայում է, որ երբեմն Ելից ԺԲ:1-24 հատուածը ընթերցւում էր Զատկի հսկման երեկոյին՝ շաբաթ եւ կիրակի օրերի միջեւ: Ըստ Շառլ Ռընուի, Ելից այս գլուխը՝ որպէս զատկական հսկման ընթերցում յայտնի է դեռեւս Բ-Գ դարերից[9]: Այս պարագայում ինչպէ՞ս կարելի է հասկանալ մեկնութեան խորագրում Աւագ Հինգշաբթիի յայտնուելը:

Ելից գրքի ԺԲ գլխի 1-13 տներում պատմւում է իսրայէլացիների՝ Եգիպտոսից դուրս գալու պատմութիւնը, որը եւ իրենք հրէաները համարում են իրենց զատիկը: Եբրայեցերէն այն կոչւում է՝ *փէսախ*, որը նշանակում է անցում[10]. այդպէս էր կոչւում նաեւ փոնին մատուցուած զոհը: Այս տօնը կոչուեց "զատիկ" կամ "անցք", քանի որ Եգիպտոսից ելնելու նախընթաց գիշերը սատակիչ հրեշտակը, որ հարուածեց եգիպտացիների անդրանիկներին, անցաւ՝ առանց մտնելու իսրայէլացիների տները, որոնց վրայ նշան էր արուած գառան արիւնով: Եգիպտոսից ելնելու ամիսը, որ Մովսէսի կողմից *աբիբ* կոչուեց[11], հետագայում ստացաւ *նիսան* անուանումը, եւ այն հրէաների համար եղաւ ծիսական տարուայ[12] առաջին ամիսը: Այդ ամսի տասնչորսերորդ օրը՝ երկու երեկոների միջեւ պէտք է մորթուէր զատկական գառը եւ մատուցուէր ամբողջ երեկոյի ընթացքում: Նոյն ժամանակից սկսած եւ մինչեւ տօնական օրերի աւարտը հարկաւոր էր հրաժարուել խմորեալ հացից:

Յիսուսի մահուան օրն ու ժամը ճշտելիս չորս աւետարանիչներն էլ համաձայն են, որ այն տեղի է ունեցել ուրբաթ օրը՝ կէսօրից յետոյ. չորսն էլ պատմում են, որ Քրիստոսը նոյն առաւօտեան դատուեց, նախորդող գիշերը ձերբակալուեց՝ առաջին երեկոյեան զատկական

8 Տե՛ս Ճաշոց գիրք «Հայաստանեայց Եկեղեցւոյ», ի Վաղարշապատ, ի տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, ՌՅԻԱ-1872:

9 Տե՛ս **C. Renoux**, Le codex arménien Jérusalem 121. II. Edition comparée du texte et de deux autres manuscrits (Patrologia Orientalis, t. XXXVI, fasc. 2-N 168), Brepols-Tunhout, 1971.

10 Հմմտ. «Բառարան սուրբ գրոց», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 196:

11 Հմմտ. անդ, էջ 197:

12 Ի տարբերութիւն քաղաքացիական տարուան, որը սկսւում էր *տիշրէյ* ամսից:

ընթրիքը ուտելուց յետոյ, որով ճշտւում է նաեւ ընթրիքի՝ հինգշաբթի երեկոյեան կատարուելու փաստը: Աւետարանիչները համամիտ են այդ ընթրիքը իբրեւ զատկական ընթիրք ճանաչելու՝ բոլոր օրինական արարողութիւններով, այսինքն՝ զառնազենութեամբ եւ բաղարջակերութեամբ հանդերձ[13]:

Հայ Եկեղեցին ի սկզբանէ պատարագի խորհուրդը բաղարջ հացով է կատարել, որով ինքը նոյնպէս Յիսուսի ընթրիքը բաղարջակերաց օրը կատարուած լինելն է ընդունում, եւ ընդունում, որ նիսանի 14-ը, Քրիստոսի մահուան տարում, *հինգշաբթի* օրուան է հանդիպել:

Այստեղից պարզ է դառնում, թէ ինչու մեր Ա գրչագրին վերնագիր է դրուած «*Մեծի Հինգշաբաթի*» եւ այլն, եւ որպէս մեկնուող նիւթ ընտրուած է Ելից ԺԲ գլուխը:

Բնագիրը սկսւում է դիմում-կոչումով՝ *Արդ պիտոյ է մեզ հաւատք ճշմարիտ՝ յանենայն բարի գործս մեր, ո՛վ սիրելիք*, որից անմիջապէս յետոյ մէջ է բերվում աւետարանական խօսքը. *զի զոր աղխնակ տուն ինչ, որ ոչ ունիցի հիմն հաստատուն, ոչ կարէ կալ, այլ վաղվաղակի, ի շնչել հողմոյ կործանի՝ ըստ բանին Տէառն* (հմմ. Մտթ. Է 27) : Այնուհետեւ որպէս նախաբան, նախքան մեկնուող նիւթին անցնելը, խօսում է հին զատկի (որն անուանում է նաեւ պասքա), եւ նոր զատկի մասին, զուգահեռականներ են տարւում հրէական եւ քրիստոնէական զատկի միջեւ՝ խօսում է դրանց տարբերութիւնների եւ ընդհանրութիւնների մասին: Ուսումնասիրուող մեկնութիւնը կարելի է բնութագրել իբրեւ «տիպաբանական» կամ «ստուերագրական»՝ Հին Կտակարանի շարադրանքի հանգամանքները քննում են ոչ միայն որպէս այդպիսիք՝ պատմական իրողութիւնների կամ բարոյական-հոգեբանական իմաստի տեսակէտից, այլեւ դիտւում իբրեւ «ստուեր» կամ «նախատիպ» Նոր Կտակարանի իրադարձութիւնների, եկեղեցական ծէսի եւ քրիստոնէական հոգեւոր կեանքի համար: Այս միտումը պարզ երեւում է շղթայի համար ընտրուած հատուածներից եւ կազմողի ընդմիջարկութիւններից: Այդպէս, Մարութայի անունը կրող հատուածում կարդում ենք. «Բայց արժան է նախ զաւրինակացն բուռն հարկանել, եւ ըստ կարգի ցուցանել զճշմարտութիւն, զի յայտնի լիցի, թէ ի սկզբան անդ նկարեալ էր խորհուրդ զենմանն Քրիստոսի յաւրինակի, եւ այժմ, յորժամ բարձաւ քողն՝ լուսաւորեցաւ»: Շղթայի հեղինակը, մէջբերելով Փիլոնի կշռադատութիւնը համընդհանուր քահանայութեան մասին, աւելացնում է. «Առ հին Իսրայէլ այսպէս, իսկ առ նոր Իսրայէլ ամենեցուն աւրինադրէ քահանայագործել, եւ զենուլ զմարմին իւր պատարագ Աստուծոյ կենդանի եւ հաճոյ», նոյնը եւ Աստուածաբանի անունով՝ «Առ հին ժողովուրդն մարմնապէս այս, իսկ առ մեզ հոգեպէս կատարեցաւ»: Եւս Փիլոնից մեջբերելով, հեղինակն ընդմիջարկում է. «Որ վասն հին զատկին խրատ այսպէս, իսկ վասն նորոյ զատկիս եւ ճշմարիտ զենմանս. հոգեպէս առնիլ է զասացեալս»: Այս սկզբունքով թելադրուած է շղթայի կառուցուածքը. ինչպէս բնաբանի առանձին տեղիների մշակման եղանակը (նախ՝ Փիլոնի մեկնությունը «ըստ հին Իսրայէլի», այնուհետեւ քրիստոնեայ հեղինակների «հոգեւոր» մեկնութիւնը), այդպէս էլ ամբողջ երկասիրութեան յօրինուածքը, որին յարադրւում եւ միաժամանակ հակադրւում է Ելից ԺԲ գլխի Զատկին նուիրուած դրուագի եւ աւետարանական՝ Խորհրդաւոր Ընթրիքի մեկնութիւնները: Վերջինս բերւում է Մարութայի անունով եւ նախադրուած է հետեւեալ

13 Հմմտ. **Մ. Օրմանեան**, Համապատում, Անթիլիաս - Լիբանան,1983,էջ 493:

յայտարարութեամբ. «Եւ արդ, վասն զի զհինն ըստ նորոյս խորհրդոյ համեմատեալ, ըստ կարի ցուցաք, բեր այսուհետեւ զնոյն ինքն՝ զխորհուրդն, որ այսաւր ի Քրիստոսէ աւանդեցաւ՝ պատմեսցուք, հետեւաբար՝ ըստ սրբոց աւետարանչացն ճառից», որը վկայում է յօրինուածքի այս եղանակի միանգամայն գիտակցուած լինելը:

Մեզ մատչելի երկու գրչագրերում նախաբանի սկզբի համար որեւէ հեղինակ բնագրի լուսանցքներում նշուած չէ: Բայց այդ նախաբանից մէկ հատուած պահպանուել է ՄՄ թիւ 1398 (ԺԴ դ.) ձեռագրում՝ *Ի Մարութայէ հինգշաբաթին բանքս* վերնագրով (էջ 409բ-410բ), որը գրեթէ բառացիօրէն կրկնում է խնդրոյ առարկայ բնագրի սկիզբը: Այդ հանգամանքը թոյլ տուեց վերականգնել Մարութայի անունը նախաբանի սկզբնամասին կից: Նախաբանի միւս հատուածները, որոնց սկզբնաղբիւրները մեզ անյայտ են, թէրեւս նոյնպէս պատկանում են Մարութայի գրչին, քանի որ թէ՛ ոճական եւ թէ՛ բառապաշարային նոյնութիւնը, ինչպէս նաեւ նախաբանի՝ մէկ ամբողջական կառուցուածք ունենալու փաստը, մեզ ենթադրել է տալիս, որ դա միեւնոյն հեղինակի գործ է: ՄՄ թիւ 1247 ձեռագրում գտնուող գրչագրի վերնագիրը, որն է՝ *Մեծի հինգշաբաթի նորոյն Մարութայի*[14], առաւել եւս հարկադրում է մեզ հակուելու վերոնշեալ ենթադրութեանը, որովհետեւ այդ վերնագիրը, ինչպէս նաեւ Վենետիկի թիւ 499 ձեռագրում գտնուող գրչագրի *Ի հինգշաբաթի սրբոյն Մարութայի* վերնագրը[15], մեր կարծիքով, երբեմն դրուել է որպէս մի ամբողջական գործի վերնագիր, որից, թէրեւս, հատուածներ են պահպանուել մեզ յայտնի ձեռագրերում:

Մնում է պարզել, թէ ո՞վ էր այդ Մարութան:

Հայագիտութեանը յայտնի Մարութան նախ եւ առաջ կապւում է «Վկայք Արեւելից» ժողովածուի հետ, որը հայերէն է թարգմանուել Ե. դարի 50-ական թուականներին[16]:

Երուանդ Տէր-Մինասեանը, խօսելով Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից» ժողովածուի մասին, ասում է հետեւեալը.

«Որ այս գրուածքը («Վկայք Արեւելից»-ը) թարգմանութիւն է, դրա մասին որեւէ կասկած լինել չի կարող: Ամենայն հաւանականութեամբ նա պատկանում է Մայփերկաթի (=Նփրկերտ=Մարտիրոպոլիս, ասորերէն՝ Մըդինատ Սահդե=Մարտիրոսաց Քաղաք) եպիսկոպոս Մարութասի գրչին, որ գուցե իր ձեռքի տակ ունեցել է հին վկայաբանութիւններ եւ նրանցից ամբողջացրել ու խմբագրել է վկայաբանութիւնների այս ժողովածուն, որ «Վկայք Արեւելից» վերնագիրն է կրում[17]:

Այնուհետեւ բնագրային համեմատութիւններ անցկացնելով ասորերէնի, յունարէնի եւ հայերէնի միջեւ՝ նա ցոյց է տալիս, որ «Վկայք Արեւելից» ժողովածուի սկզբնական թարգմանութիւնը կատարուել է ասորերէնից, եւ այդ ժողովածուի արժէքը այնքան մեծ է, որ երբեմն դրանով նոյնիսկ կարելի է վերականգնել ասորական բնագիրը[18]:

14 Տե՛ս ձեռ. թ. 1247, էջ 290 բ:

15 Տե՛ս **Սահակ վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, էջ 205-207:

16 Տե՛ս **R.Marcus**, The Armenian Life of Marutha of Maipherkat, Harvard Theological Studies 25 [1932], 47-73. **L.Ter-Petrosian**, L'attribution du recueil des Passions des martyrs perses à Maroutha de Maypherqat, Analecta Bollandiana, 97, 1979, 129-30. **Л. Тер-Петросян**, Сиро—армянские литературные связи в IV—V вв., (автореферат), Ленинград, 1986, էջ 24:

17 Տե՛ս **Ե. Գ. Տէր-Մինասեան**, Պատմա-բանասիրական հետազոտութիւններ, Եր., 1971, էջ 68:

18 Համտ. նշվ. աշխ. էջ 69-87:

Նփրկերտի եպիսկոպոս Մարութան յայտնի է նրանով, որ Թէոդոսիոս Բ. կայսեր կողմից երկու անգամ ուղարկուել է պարսից արքա Հազկերտի մօտ որպէս պատուիրակ՝ այդ ժամանակ պարսկական փիրապետութեան տարածքներում հալածանքների ենթարկուող քրիստոնեաների համար միջնորդելու նպատակով: Չնայեած մոգպետի կողմից ստեղծուած խոչընդոտներին, Մարութային, իր սիրալիրութեան եւ սրբակեցութեան շնորհիւ, եւ ոչ պակաս՝ հմուտ բժիշկ լինելու հանգամանքով, յաջողւում է շահել պարսից արքայի վստահութիւնը[19]:

Նա մասնակցել է 381 թուականի Կոստանդնուպոլսի ժողովին: Ներկայ է գտնուել նաեւ Անտիոքի 383 թուականի ժողովին, որտեղ դատապարտուել է մծղնեական շարժումը[20]: Ղեկավարել է նաեւ Սելեւկիայի 410 թուականի ժողովը՝ կաթողիկոս Իսահակի եւ Յաբհալահայի (Yabhalaha) հետ միասին:

Արդիշոն Մարութային է վերագրում հետեւեալ աշխատութիւնները՝

-*Գիրք վկայից* :
-*Շարականներ եւ օրհներգեր վկաների մասին* :
-*Նիկիոյ ժողովի կանոնների թարգմանութիւն* :
-*Պատմութիւն Նիկիոյ ժողովի* [21]:

Մարութան մահացել է նախքան 420 թվականը[22]:

Հայերէն ձեռագրերում եւս կան Մարութային վերագրուող նիւթեր: Այսպէս, Գարեգին Զարբհանալեանը այս նոյն Մարութային է վերագրում հետեւեալ աշխատութիւնները.

*-Մարութայի բանք, հարցմունք եւ այլն: (Գոյ հատուած ինչ ի վկայութիւնս վասն բնութեան Քրիստոսի):*

*-Ի խորհուրդ Եկեղեցոյ.«Եւ արար Բեսեղիէլ. արդ տապանակն յանփուտ փայտից ի խորհուրդ...» եւ այլն:*

*-Ի խորհուրդ Երեքշաբաթի. «Պիտոյ են հաւատք...»:*

*-Վկայաբանութիւն սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի Պարսից եւ այլոց վկայից:*

*-Մարութայի արքեպիսկոպոսի ի սուրբ յարութիւնն Քրիստոսի[23]:*

Որքան մեզ յայտնի է, Մաշտոցի անուան Մատենադարանի հին ձեռագրերի ինստիտուտի ձեռագրապահոցում պահւում են Մարութայի անուամբ յայտնի հետեւեալ գործերը (չենք թուարկում Մարութային պատկանող վարքագրական աշխատութիւնը եւ սոյն ուսումնասիրութեան առարկայ մեկնութիւնը):

---

19 Տե՛ս **W. Wright**, A Short History of Syriac Literature, London, 1894, էջ 44:
20 Տե՛ս անդ:
21 Տե՛ս անդ:
22 Տե՛ս անդ:
23 Տե՛ս **Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 560-561:

*-Մարութայի վասն մկրտութեան*[24]*:*
*-Նախերգան Մարութէի ի մկրտութիւն*[25]*:*
*-Մարութայի վասն ծննդեան Քրիստոսի*[26]*:*

Բոլոր նշուած երկերը յայտնի են միեւնոյն հեղինակի անունով: Խնդիրը, սակայն, այն է, որ ասորի գրականութեան մէջ այս նոյն անունով յայտնի են երկու հեղինակներ: Երկրորդ Մարութան, որն ապրել է Զ-Է. դարերում[27], յայտնի է աւելի շատ իր եկեղեցական գործունէութեամբ, քան իր գրական վաստակով: Նա ծնունդով Բեթ-Նուհադէր նահանգի Շուրզակ գիւղից էր, որը գտնւում է այսօրուայ Բաղդադի մերձակայքում: Եղել է Նարդուսի մենաստանի քահանայ, այնուհետեւ տասը տարի ապրել է Զաքքայի անապատում, որը գտնւում է Կալլինիկոնում (կամ՝ Ար-Ռաքքա), որից յետոյ մեկնել է Եդեսիայ՝ ուսման մէջ հմտանալու նպատակով: Վերադառնալով Արեւելք՝ նա բնակւում է Մար Մատթայի անապատում, որը գտնւում է Մոսուլում: Այնտեղ նա սկսում է արդիականացնել կանոններն ու կարգերը, եւ հետզհետէ յարում է Պարսկաստանի տարածքում գտնուող միաբնակների (մոնոֆիզիտ)[28] բանակին, իսկ բժիշկ Գաբրիէլի մահուանից յետոյ որոշում է գնալ Ակոլա (կամ՝ ալ-Քուֆա): Նա 640 թուականին մեծ ճանաչում ձեռք բերեց՝ որպէս Տագրիտի եպիսկոպոս՝ խաղաղութիւն հաստատելով պարսիկների եւ յոյների միջեւ, եւ նա էր, որ Արեւելքում կազմաւորեց Յակոբիկեան եկեղեցին: Այդ եկեղեցին արագօրէն աճեց եւ դարձաւ ազդեցիկ: Այնուհետեւ եպիսկոպոսներ կարգեց այնպիսի հեռաւոր շրջաններում, ինչպիսիք էին Սեգեստան եւ Հերաթը: Մարութան մահացել է 649 թուականին: Նրա կենսագրութիւնը գրել է իր հաջորդը՝ Դենհան[29], որ եւ դասակարգել է նրա գրութիւնները:

Մարութայի գրչին են պատկանում հետեւեալ գործերը.

*-Պատարագի եւ Աւետարանի մասին գրուած մեկնութիւնը* [30] :
*-Մի քանի կարճ ճառեր Նոր Կիրակիի մասին* :
*-Քարոզ Աստուածայայտնութեան ջրօրհնէքի մասին:*
*-Մի քանի տաղեր եւ սեդրաններ (չափածոյ օրհնութիւններ)* :
*-Պարսից եկեղեցու նեստորականացման պատճառը* [31]:

---

24 Տե՛ս ձեռագիր թ. 1398:

25 Տե՛ս ձեռագիր թ.2142:

26 Տե՛ս ձեռագիր թ. 6617:

27 **W. Wright**, op.cit., p. 136.

28 Հնարաւոր թիւրիմացութիւններից խուսափելու համար նախընտրելի կլինէր, ի հարկէ, գործածել «հակաքաղկեդոնական» եզրը: Քրիստոսի բնութիւնների փոխառընչութեան հիմնախնդրի նկատմամբ Արեւելեան եկեղեցիների իրական դիրքորոշման մասին աւելի մանրամասն տե՛ս **Յուսիկ սրկ. Յարութիւնեան**, Հայ-ասորական եկեղեցական առընչութիւնները Զ դարում, Էջմիածին, 2008 թ. (ավարտաճառ): Մեր բնագրում մէջբերուող Մարութայի՝ արմատական միաբնակ լինելը թէրեւս երեւան է գալիս նախաբանում գտնուող այսպիսի մի դրուագից. «Զի մի՛ յորժամ լուիցուք զկամաւոր խոնարհութիւնն Քրստոսի, եւ զկիրսն, որ վասն մեր՝ այսինքն զնախատինսն, որ ի խաչահանուացն, զկռփելն, զապտակելն, զհայհոյելն, զմահ խաչին, *մարմնաւոր ինչ իրս զմտաւ ածիցեմք*, եւ յայսմանէ ի վայր հակեալ ի խորխորատ եւ ի վիհս թերահաւատութեան անկանիցիմք»:

29 Տե՛ս **Brit. Mus**. Add. 14645, f. 198 a.

30 Այս գրուածքը երբեմն վերագրում են իրենից առաջ եղած Մարութային:

31 Այս երկասիրութիւնը պահպանուել է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» ասորերէն բնագրում:

Ուշագրաւ է, որ առաջին Մարութայի գործերը, ըստ ասորական աւանդութեան, աւելի շատ վարքագրական, պատմական եւ թարգմանական բնոյթի են. նրա ժառանգութեան մէջ չկան մեկնողական աշխատութիւններ: Մինչդեռ այսպէս կոչուած միաբնակ Մարութայի ժառանգութեան մէջ այդպիսիք կան, ինչը եւ թոյլ է տալիս ենթադրելու, որ մեր հրապարակուող շղթայի՝ Մարութայի անուամբ յայտնի հատուածների հեղինակը կարող է լինել Է. դարում ապրած Մարութան: Այս ենթադրութեան իրաւացիութեանն է նպաստում նաեւ այն հանգամանքը, որ ՄՄ թիւ 1247 ձեռագրում խնդրոյ առարկայ մեկնութեան վերտառութիւնն է՝ *Մեծի հինգշաբաթի* ***նորոյն*** *Մարութայի* : Եթէ կարող է լինել «նոր» Մարութա, ապա նրանից առաջ պէտք է լինէր եւ հինը: Ուրեմն, խորագրի հեղինակը գիտակցել է երկու Մարութաների իրողութիւնը, եւ այդ երկու Մարութաներին զանազանելու համար, երկրորդին, այսինքն՝ Զ-Է. դարերում ապրածին անուանել է **նոր** Մարութա:

ՄՄ թիւ 1247 ձեռագրի գրչագրի վերնագիրը ցոյց է տալիս նաեւ, որ երբեմն գոյութիւն է ունեցել «Մեծի հինգշաբաթի նորոյն Մարութայի» կամ նման վերնագրով յայտնի մի ամբողջական գործ, որից պահպանուել են հատուածներ հրապարակուող շղթայ-մեկնութեան երկու գրչագրերում, ինչպէս եւ մէկ հատուած ՄՄ թիւ 1398 ձեռագրում: Արդեօ՞ք այն իսկապէս թարգմանուել է ասորերէնից եւ սկզբնապէս պատկանել է որեւէ Մարութայի գրչին, այս հարցին, յուսով ենք, պատասխանելու են հայ-ասորական առնչութիւններն ուսումնասիրող մասնագէտները: Առայժմ, որքան մեզ յայտնի է, այս բնագրի գէթ բեկորները գիտական շրջանառութեան մէջ չեն դրուել:

*Մեծի հինգշաբաթի նորոյն Մարութայի* կամ *Ի տաւն Պասէքին ասացեալ սուրբ վարդապետաց* շղթայ-մեկնութեան երկրորդ կարեւոր աղբիւրը՝ Փիլոն Աղեքսանդրացու «[Այնոցիկ որ] յԵլից [խնդրոց եւ լուծմանց]» մեկնութեան առաջին գիրքն է[32], որից մէջբերումներ են կատարւում թէ՛ բառացի, եւ թէ՛ խմբագրուած՝ վերապատմական եղանակով: Յաճախ Փիլոնի բնագիրն ընդգրկում է նաեւ մեկնող աստուածաշնչեան բնաբանը, որը նոյնպէս կարող է հանդէս գալ եւ՛ կանոնաւոր՝ Զօհրապեան բնագրի տարբերակով, եւ՛ աւելի ազատ, խմբագրուած ձեւով:

Բաւական վստահութեամբ կարելի է որոշել եւ «Աստ[ուածաբան]» նիշով սկսուող գրէթէ բոլոր հատուածների աղբիւրները: Դա Գրիգոր Աստուածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառաշարի՝ *Նորին խաւսք ամենասուրբ պասքայ աստուծոյ մերոյ* առայժմ անտիպ ճառն է: «Քրիստոս ծնեալ» ճառաշարը յայտնի է քառասունվեց ընդօրինակութեամբ (ներառեալ թերի եւ պակասաւոր ձեռագրերը), որոնցից քսանմէկը (այդ թւում եւ հնագոյնը՝ ձեռ. ՄՄ թիւ 946, ԺԲ դ.) պահւում է Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում[33]: Մենք օգտուել ենք ՄՄ թիւ 946 (100բ-127բ) ձեռագրում գտնուող՝ *Նորին խաւսք ամենասուրբ պասքայ աստուծոյ մերոյ* ճառի գրչագրից: Սակայն Աստուածաբանի մի քանի մէջբերումների սկզբնաղբիւրները մեզ անյայտ են. թէրեւս դրանք երեւան կբերուեն

32 Տե՛ս **Փիլոն Եբրայեցի**, Մնացորդք ի Հայս, աշխատութեամբ Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց, Ի Վենետիկ, Ի վանս սրբոյ Ղազարու, Յամի 1826, ՌՄՀԵ, էջ 444-467:

33 Տե՛ս **Կ. Մուրադեան**, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութեան մէջ, Եր., 1983, էջ 75: Գրիգոր Աստուածաբանի այս ճառի հին հայերէն թարգմանութիւնը առայժմ անտիպ է:

Ասպուածաբանի յունարէն բնագրերի գնման արդիւնքում, կամ կպարզուի դրանց իսկական հեղինակը: Եւ ընդհակառակը՝ հայ մատենագրութեան մէջ Ասպուածաբանի երկերը յաճախ շփոթել են այլ հեղինակների երկերի հետ[34]: Մեր բնագրում նոյնպէս առկայ է այդ երեւոյթը. բնագրային համեմատութիւնները ցոյց տուեցին, որ Մարութային վերագրուած որոշ հատուածների հեղինակն իրականում Գրիգոր Ասպուածաբանն է:

Երկուական հատուածներ, որ բերուած են Բարսեղի եւ Եփրեմի անուններով, այս հեղինակների լոյս ընծայուած հայերէն թարգմանութիւններում չկան: Անհնար եղաւ նոյնացնել Բարսեղի հատուածները նաեւ յունարէն բնագրին: Թէրեւս սրանք նոյնպէս կեղծանուն են, եւ պէտք է սպասել, մինչեւ հանգամանքները նպաստեն իսկական հեղինակների որոշմանը:

Իբրեւ մեկնութեան խորագիր մենք ընդունել ենք Բ գրչագրի վերնագիրը, քանի որ այն ընդհանուր բնոյթ է կրում, եւ այն, որ Մարութան չի կարող լինել ամբողջ մեկնութեան հեղինակը: Ա գրչագիրը համեմատաբար աւելի լաւ է պահպանուած, քան Բ-ն, եւ այդ պատճառով այն դրուել է մեկնութեան համեմատական-քննական բնագրի հիմքում, թէեւ տեղ-տեղ Բ. գրչագրի ընթերցուածները աւելի որակեալ լինելով դրւում են Ա-ի փոխարէն՝ հիմնական բնագրում:

Ուղղագրութիւնը կանոնաւորուած է: Տողատակում նշւում են միայն իմաստազատիչ ընթերցուածները. բացի գրչագրայինից, նշւում են նաեւ տպագրուած աղբիւրների տարընթերցումները:

Օգտագործած նշաններն են.

\\- դրուելով հատուածի սկզբում՝ ցոյց է տալիս ուղղակի մէջբերումները: Աստուածաշնչեան ուղղակի մէջբերումները առնուած են չակերտների մէջ:

* - դրուելով հատուածի սկզբում՝ ցոյց է տալիս վերապատմուած մէջբերումները:

[ ] - փակագծերի մէջ են առնուած վերականգնուած հատուածները:

|| - տարընթերցումը վերաբերում է ոչ թէ մէկ բառին, այլ բնագրի հատուածին:

( ) - Փակագծերի մէջ են առնուած հատուածի հեղինակի անունը, նշւում է աղբիւրը՝ ձեռագիր կամ տպագիր եւ էջը (Փիլոնի Եւլից մեկնութեան դէպքում՝ նաեւ գլուխը): Եթէ մէջբերումը բառացի է, ապա յղումը ներմուծւում է «տե՛ս» նշումով, եթէ վերապատմուած է՝ ապա «հմմ.»:

ՕԼԳԱ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԹՈՐՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՐԱՆԵԱՆ

34 Հմմտ. անդ, էջ 51-69:

# Ի ՏԱՒՆԻ ՍՈՒՐԲ ՊԱՍԷՔԻՆ՝ ԱՍԱՑԵԱԼ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ[1]

Արդ պիտոյ է մեզ հաւատք ճշմարիտ՝ յամենայն բարի գործս մեր, ո՜վ սիրելիք, որ է հիմն հաստատութեան, յորոյ վերայ ամենայն կրաւնք քրիստոնեութեան շինին, *զի զոր աւրինակ տուն ինչ, որ ոչ ունիցի հիմն հաստատուն, ոչ կարէ կալ, այլ վաղվաղակի, ի շնչել հողմոյ, կործանի, ըստ բանին Տեառն (Տմմ. Մտթ. Է:27): Սոյնպէս եւ ամենայն մարդ, որ ոչ ունիցի զճշմարիտ հաւատսն, իբրեւ զհիմն հաստատուն յանձին իւրում, վաղվաղակի առ պէսպէս ապարոտի ուսմունս դանդաչեալ փութապէս ի վայր անկեալ կործանի, վասնզի հաւատք են կեանք հոգոյ հաւատացելոց: «Արդարն ի հաւատոց իմոց կեցցէ» (Տե՜ս Ամբա. Բ:4, Եբրա. Ժ:38), ասէ Աստուած մարգարէիւն, եւ եթէ. «Երկմիտ ոք իցէ, ոչ կամի զնա յանձն իմ» (Տե՜ս Ամբա. Բ:4, Եբրա. Ժ:38), եւ եթէ որպէս իցեն հաւատք, որ զամենայնին ընդ ինքեան պնդեալ ունի, որ յուսով զհանդերձեալսն, զեղեալս ընդունի զաներեւոյթսն՝ իբրեւ զերեւելիս, ըստ առաքելական բանին: Եւ դարձեալ թէ. «Առանց հավատոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ» (Տե՜ս Եբրա. ԺԱ:6), եւ թէ՝ «Նովաւ պայծառացան առաջինքն, եւ ժառանգիցեն զարքայութիւնն զնոյն երկնից հաւատոյ» (Տե՜ս Եբրա. ԺԱ:2): Եւ մեք հաստատեսցուք յանձինս իբրեւ զխարիսխ անշարժ ի վերայ ամեհի ալեաց ովկիանոսի[2] ծփմանց խորհրդոց աշխարհի: Զի մի յորժամ լուիցուք զկամաւոր խոնարհութիւնն Քրստոսի եւ զկիրսն, որ վասն մեր՝ այսինքն զնախատինսն, որ ի խաչահանուացն, զկոփելն, զապտակելն, զհայհոյելն, զմահ խաչին, մարմնաւոր ինչ իբս զմտաւ ածիցեմք եւ յայսմանէ ի վայր հակեալ՝ ի խորխորատ եւ ի վիհս թերահաւատութեան անկանիցիմք: Զի զորաւրինակ հաւատք ի վերայ ալեաց զնան, այսպէս՝ թերահաւատութիւն եւ երկմտութիւն ի ներքոյ ալեաց խորտակին: Եւ զայսոսիկ զերկոսեանս յԱւետարանէ անտի ուսանիմք, որպէս ճշմարտապէս Սիմոնի ի միում ժամու զայսոսիկ դիպեցաւ կրել (Տմմ. Մտթ. ԻԷ:32, Մարկ. ԺԷ:21, Ղուկ. ԻԳ:26): Նաեւ ոչ սուրբ առաքեալքն արդարեւ երկմտեցին ինչ, յորժամ աւանդեաց նոցա Քրիստոս զսուրբ խորհուրդն ի վերնատան անդ (Տմմ.Գործ. Բ): Ինքն բազմեալ է[ր] ընդ նոսա մարմնապէս, եւ նոքա ուտէին եւ ըմպէին զմարմին եւ զարիւն նորա առանց երկմտութեան, քանզի այսպէս իսկ հաւատք ոչ գիտեն երկմտութիւն: Արդ՝ հաւատասցուք եղբարք, թէ Մեծատունն վասն մեր աղքատացաւ, զի զմեզ մեծացուսցէ, Բարձրեալն վասն մեր խոնարհեցաւ, զի զմեզ բարձրացուսցէ, Երկնաւորն վասն մեր երկրաւոր եղեւ, զի զմեզ երկնաւոր արասցէ: Եւ այս ամենայն ստուգապէս, զի յայտ յանդիման լինիցի զմեզ, եւ եթէ զգիրս սուրբս հոգեւորապէս քննեսցուք եւ ի նոցանէ, իբրեւ ի հոգեւոր գանձանակէ, զփրկական խորհուրդ տնաւրենութեան Քրիստոսի ի յանձինս մեր ամպարիցեմք:

[**Մարութա**]: Բայց վասնզի տաւն է մեզ այսաւր սուրբ պասքայիս, պարտ է նախ զանազանութիւն անուանց տանիս ասել: Արդ կոչի տաւնս այս՝ լրումն[3] չորեքտասաներորդի եւ տաւն խորհրդոց, եւ տաւն Զատկի, եւ է տաւն չորեքտասաներորդի, ըստ թուոյ առա-

1 Ա Մեծի Հինգշաբթի նորոյն Մարութայի:

2 Բ ծովուս:

3 Բ տաւն:

ջին ամսոյն, որ է Նիսան, յորում եւ կատարի իսկ, որ[4] ասաց Աստուած Մովսիսի, թէ. «Ի չորեքտասաներորդի առաջին ամսոյն արասցես տաւն զատիկ Տեառն» (Տե՛ս Թւոց. Թ:3): Իսկ տաւն խորհրդոց. վասն զի այսաւր յայտնեաց Քրիստոս զսուրբ խորհուրդն իւրոց առաքելոցն ի վերնատունն խորհրդոյ, զի ոչ յանդիման այլոց մարդկան լուաց (Տե՛ս. Յովհ. ԺԳ:5) զոտս նոցա, եւ ետ զմարմին եւ զարիւն իւր սուրբ ճաշակել նոցին (Տե՛ս. Մարկ. ԺԴ:22-24, Ղուկ. ԻԲ:19-20), այլ առանձինն խորհրդով կատարեաց, այլեւ խորհուրդն, զոր կանխաւ[5] ծանուցին տեսանողքն՝ այսաւր լցաւ: Իսկ տաւն զատկի կոչի այլեւ պասքա, որէիցն եւ մեզ հաւատացելոցս, զի յայսմ աւուր ազատեալք ելին յԵգիպտոսէ ի դառն ծառայութենէն փարաւոնի: Եւ անուանեցին զաւրս զայս զատիկ, որ թարգմանի ուրախութիւն, զի այսաւր ուրախացան նոքա՝ զենմամբ զառինն խորհրդոյ, զոր հրաման առին ի Մովսէսէ: Եւ արեամբն աւծեալ զսեմս մտից տանն՝ անվնաս մնացին ի սատակչէ անտի եւ զանդրանիկս թշնամեացն սպանեալ[6] տեսին: Կոչեցին եւ պասքա զսոյն աւր, որ թարգմանի անցանակ, զի յետ զգառնն ուտելոյ բաղարջովն եւ դառնջաւ, ելեալ յԵգիպտոսէ անցին ընդ ծովն Կարմիր՝ ճանապարհորդեալք յԵրկիրն աւետեաց: Իսկ մեզ հաւատացելոցս կոչի սա զատիկ, զի յայսմ աւուր արեամբ Գառինն Աստուծոյ Հաւր ազատեցաք ի ծառայութենէ իմանալի փարաւովնի եւ յեգիպտական կռամոլութեանցն եւ խաւարատեսակ ախտիցն: Եւ ուրախացեալք ընդ փրկութիւն մեր՝ ուրախութիւն զաւր զայս[7] կոչեցաք եւ անցակն[8]: Զի այսաւր ազատութեամբն, որով ազատեաց զմեզ Քրիստոս՝ զառն անապական, անցաք ընդ ծով մեղաց կենցաղոյս՝ ճանապարհորդեալք յերկնային երկիրն, որոյ վայելչութիւնն ոչ է նռնենեաց եւ ձիթենեաց, եւ թզենեաց եւ այգեաց, տանց եւ ջրհորոց, այլ արքայութիւն եւ պտուղ կենաց, եւ սեղանն կենդանարար եւ կեանք անվախճան: Քանզի եւ ոչ փրկութիւնն մեր իբրեւ զնոցայն, զի որպէս մարմնական էր չարչարանքն նոցա, այնպէս[9] ըստ մարմնոյ փոխանորդեցին զուրախութիւնն: Իսկ մեզ, զի հոգոց էին վիշտքն եւ անմարմին պատերազմն, հոգեւոր եւ անապական ընկալաք զուրախութիւնն, զի նոքա Մովսէսիւ եւ արեամբ զառինն փրկեցան, իսկ զմեզ Քրիստոս՝ Գառն անարատ, իւրով կենդանարար արեամբն ազատեաց: Եւ արդ, զի զզանազանութիւն անուանց տաւնիս ասացուք, պարտ է, որ յայսմ աւուր փրկագործութիւնք կատարեցան ի Քրիստոսէ ասել մեզ: Բայց արժան է նախ զաւրինակացն բուռն հարկանել եւ ըստ կարգի ցուցանել զճշմարտութիւն, զի յայտնի լիցի, թէ ի սկզբան անդ նկարեալ էր խորհուրդ զենմանն Քրիստոսի յաւրինակի անդ, եւ այժմ, յորժամ բարձաւ քողն՝ լուսաւորեալ երեւեցաւ[10]:

«Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացոց եւ ասէ. «Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջինն եղիցի ձեզ յամիսս տարոյ» (Տե՛ս Ելք. ԺԲ:2): «Խաւսեաց ընդ ամենայն ժողովրդեանն որդոց Իսրայէղի եւ ասասցես. «Ի տասներորդի ամսեան այսորիկ, առցեն իւրաքանչիւր ոչխար՝ ըստ տուն ազգաց, ոչխար՝ ըստ երդ: Եւ եթէ սակաւք իցեն ի տանն, որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցեն ընդ իւր զդրացի իւր եւ զընկեր իւր ըստ մարդաթուի, իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն: Ոչ-

4 Բ թէ:
5 Բ նախ:
6 Բ սատակեալ:
7 Բ զսա:
8 Բ անցանակ:
9 Բ սոյնպէս:
10 Բ լուսաւորեցաւ:

խար կապարեալ արու փարեւոր լիցի ձեզ[11]. յաղեաց եւ յայծեաց առնուցուք եւ եղիցի ձեզ պահել մինչեւ ի չորս եւ ի տասն աւր ամսեանս այսորիկ. եւ զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեանն որդոցն Իսրայէղի ընդ երեկս: Եւ առցեն յարենէն եւ դիցեն ի վերա երկուց սեմոցն. եւ բարաւորի տանն, յորս ուտիցեն զնոսա: Եւ կերիջիք զմիսն ի գիշերիս յայսմիկ՝ խորովեալ հրով. եւ բաղարջ ընդ եղեգի կերիջիք: Եւ մի՛ ուտիցէք ի նմանէ հում, եւ մի՛ պախ եփեալ ջրով, այլ խորովեալ հրով: Զգլուխն ոտիւքն հանդերձ եւ զփորոտի նորա. եւ մի՛ թողուցուք ի նմանէ յայգ: Եւ ոսկր մի՛ բեկանիցէք ի նմանէ, եւ որ ինչ մնասցէ ի նոցանէ յայգ՝ հրով այրեսջիք: Եւ այսպէս ուտիցէք[12]՝ զաւտիք ձեր ընդ մէջ եւ կաւշիկք[13] ձեր յոտս. եւ ցուպք[14] ձեր ի ձեռինս[15]. եւ փութանակի կերիջիք, զի զատիկ Տէառն է: Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպտացւոց ի գիշերիս յայսմիկ, եւ հարից զամենայն[16] անդրանիկսդ Եգիպտացւոց ի գիշերիս յայսմիկ: Եւ յամենայն դիս նոցա արարից վրէժխնդրութիւն, զի ես եմ Տէր: Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վերայ սեմոց տանցն, յորս ուտիցեք դուք անդր, եւ ապրեցուցից զձեզ» (Տե՛ս Ելք. ԺԲ:3-13):

**Ասպուածաբան:** Զամենայն աւրէնսն՝ սպաեր հանդերձեալոցն եւ իմանալեացն գրեաց ասպուածայինն առաքեալ. \\եւ նոյն ինքն Ասպուած ասաց ցՄովսէս, յորժամ վասն սոցունց աւրինադրեր. «Տե՛ս, ասէ, արասցե՛ս զամենայնն ըստ աւրինակի խորանին, որ ցուցաւ քեզ[17] ի լերինն»: (Տե՛ս Ելք. ԻԶ:30) Նկարագրութիւն իմն եւ նախագիծ աներեւոյթիցն եցոյց զերեւելիսս, զի ոչինչ վայրապար եւ անիմաստ[18] եւ ի վայր անկեալ[19] յայնցանէ հրամայեցաւ[20], եւ ոչ անարժան Ասպուծոյ աւրինադրութեան, եւ Մովսէսի գործակցութեանն\\ (Տե՛ս Ասպուածաբան, ձեռ. 947, էջ 104ա-104բ), այլ բարձրագոյնք եւ ասպուածայինք՝ եւ լի իմաստութեամբ: \\Թ-էպէտ եւ դժուարին է զիւրաքանչիւր ուրուք սպաերացն զիւրաքանչիւրցն[21] գտանել զպեսութիւն \\ (Տե՛ս Ասպուածաբան, էջ 104բ), *զի այս Մովսէսի է, եւ որք ըստ նորայն առաքինութեանն եւ իմաստութեան բարգաւաճեալ են (Տմմ. Ասպուածաբան, էջ105ա): Բայց մեր ըստ մերոյ նուաստութեանս, զի մի ինչ յաւրինակացն, յորս առաւելապէս քան յայլսն փրկագործութեան մերոյ խորհուրդ, որ յայսմ աւուր կապարեցաւ ի Քրիստոսէ՝ ամբարեալ կա ի ձեռն առեալ՝ ըստ կարի բացահայտեսցուք, ըստ իւրաքանչիւրոցն առընթեր դնելով աւրինակին զճշմարտութիւն՝ ըստ ասպուածային արանց տեսութեան:

«Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. «Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, եւ առաջին եղիցի ձեզ յամիս տարւոյն» (Տե՛ս Ելք. ԺԲ:1-2):

---

11 Ա քեզ:
12 Ա ուտիջիք:
13 Ա կաւշիկս:
14 Բ ցուպ:
15 Բ ձեռին:
16 Ա յամենայն:
17 *Ասպուածաբան*՝ այսպէս: Բ չիք:
18 *Ասպուածաբան*՝ ոչ անբանապէս:
19 *Ասպուածաբան*՝ ոչ յերկիր անկեալ:
20 *Ասպուածաբան*: Բ համարեցաւ:
21 Ա զիւրաքանչիւրս:

**Փիլոն**: \\Ի զարնանային հասարակութեննէն հրամայէ (Տե՛ս Փիլոն, գլուխ Բ, էջ 443) *զամիսս պարոյն թուել՝ զբաւականութիւն նորին յուշ առնելով (Նմմ. Փիլոն, գլուխ Բ, Էջ 443) :

**Մարութա:** Քանզի յայսմ ամսեան իսկ, զբան[22] անդր ի չցոյէ ի գոյութիւն էած զամենայն երեւելի արարածս՝ բուսովք եւ տնկովք, եւ կենդանեաւք. այնպէս, որպէս ի զարնանայինն պեսեալ լինի ժամանակի:

**Եփրեմ**: Եւ ի սոյն ամսեան սրտեղծագործեաց զԻսրայեղ՝ ազատելովն յԵգիպտոսէ: Այլեւ[23] յայսմ զարնանային ամսեան Արեգակն արդարութեան՝ Քրիստոս, հանդերձեալ էր զարուն առնել հոգոց մարդկան իւրով գալստեամբն, եւ վերստին արարչագործել[24] զեղծեալ պատկերս կենդանարար եւ լուսաւոր տնաւրէնութեամբ իւրով: Եւ զինչ հրամայէ Մովսէսի առնել յայսմ ամսեան: «Խաւսեաց, ասէ, ընդ ամենայն ժողովդեան որդոցն Իսրայէղի եւ ասասցես. «Ի տասաներորդում ամսեանս այսորիկ առցեն ոչխար՝ ըստ տունս ազգաց, ոչխար ըստ երդ» (Տե՛ս Ելք. ԺԲ:3): Ընդ յաղթութեանն, զոր յաղթեցին Եգիպտացւոցն, հրամայէ ամենայն ժողովրդեանն ոչխար պատարագ մատուցանել Աստուծոյ, այլ զի եւ արիւնն փրկիչ եղիցի անդրանկաց նոցա, զի մի ընդ Եգիպտացոց անդրանկացն սատակեսցին:

**Փիլոն**: *Բայց խնդրելի է, թէ ընդէ՞ր զի ի չորեքտասաներորդ աւր ամսոյն զենլոց էր պատարագն, ի տասներորդ նորին ամսեան առնուլ հրամայէ (Նմմ. Փիլոն, էջ 443, գլուխ Գ): \\ Ուսուցանելով նոցա, մի՛ վարկպարազի եւ առանց պատրաստութեան զպատարագս այն Աստուծոյ մատուցանել[25], այլ խնամով եւ հոգալով՝[26] իբրու շնորհակալութիւն պատրաստեալ Փրկչին եւ բարեգործին ամենեցուն Աստուծոյ\\ (Տե՛ս Փիլոն, էջ 443, գլուխ Գ): Առ այսու եւ զփորձ առնուլ կամէր զնոցա, թէ հաստատեան ազատութեան իւրեանց, զոր առնելոց է Աստուած, թէ երկմիտք եւ ծոյլք գտանին: Զի թէ ի տասաներորդն, յոր հրամայեցաւ, առցեն զոչխարն եւ ի պահ արկցեն զայնքան աւուրս, երեւեսցին հաստատեալք պատգամացն Աստուծոյ, եւ փոյթ եւ պատրաստք[27] ի շնորհակալութիւն նորին: Իսկ, եթէ կացեն մնասցեն ի չորեքտասաներորդն առնուլ, յոր հրամաեցաւ զենուլ, յայտնեսցին անհաւատք բանիցն Աստուծոյ, եւ երկմիտք եւ ծոյլք առ գոհութիւն փրկողին Աստուծոյ:

**Փիլոն :** «Եւ ըստ տունս ազգաց» (Տե՛ս Ելք. ԺԲ 3) հրամայէ առնուլ զոչխարն: *Մարդասիրութիւն եւ զուգութիւն ուսուցանելով նոցա, զբաժանեալ առանձին տունսն ընդ ազգին իւ[ր]ոյ միաբանել ի պատարագն մատուցանել խրատէ (Նմմ. Փիլոն, էջ 443, գլուխ Գ): \\Զի[28] հանդերձեալ էին ճանապարհ երթալ\\ (Տե՛ս Փիլոն, էջ 443, գլուխ Գ), *եւ պիտանացու էր նոցա խորանակից եւ պաղատարակից լինել (Նմմ. Փիլոն, էջ 443, գլուխ Գ): \\Արդարացոյց զնոսա ի պատարագացն սկիզբն ընկալեալ[29] առնել զայս: Եւ դարձեալ[30], զի յամենայն

22 Ա բան:
23 Բ Արդ եւ:
24 Բ սրտեղծագործել:
25 *Փիլոն*՝ առնիցէ:
26 *Փիլոն*՝ հոգով:
27 Բ պատրաստ:
28 *Փիլոն*՝ վասն զի:
29 *Փիլոն*՝ կալեալ:
30 *Փիլոն* չիք:

պան Եգիպտացւոցն[31] էր մահ[32] անդրանկացն \\ (Տե՛ս Փիլոն, էջ 443, գլուխ Գ) եւ բովանդակ ազգացն: Վասն այսորիկ, որոց փրկեցան անդրանիկքն, պատեր յամենայն պան, եւ ի համարէն պոհման լինել շնորհակալութեանն Աստուծոյ: Եւ ասելն. «Ոչխար ըստ երդ» (Տե՛ս Ելք. ԺԲ:3), կամ ըստ երդեաց. այս է ըստ խիրաքանչիր պան առնուլ, զոր վերոյ ասաց. կամ «ոչխար ըստ երդ» (Տես Ելք. ԺԲ 3), այսինքն՝ անարատ, կամ ընտիր:

**Աստուածաբան**: Արդ այսոքիկ ըստ աւրինակի: Իսկ ըստ ճշմարտութեանս, ոչխարն առեալ լինի յաւրինակ Քրիստոսի, վասն անմեղութեան, հեզութեան եւ հանդարտութեան, ըստ Եսայեայ, թէ. «Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ զաւրոջ առաջի կտր[չ]ի անմռունչ կա, եւ ոչ բանայ զբերան» (Տե՛ս Եսայ. ԾԳ:7): Եւ Յովհաննէս «Գառն Աստուծոյ» (Տե՛ս Յովհ. Ա:29) կոչեաց զնա՝ բարձող զմեղս աշխարհի: Այլ զի զգեստ լինելով՝ ծածկեաց զմերկութիւն առաջի նախահորն, յորժամ զենաւ ի խաչին, եւ արեամբն իւրով ազատեաց զբնութիւն մարդկան ի ծառայութենէ սատանայի՝ որպէս եւ գառն աւրինական զԻսրայէլ յԵգիպտոսէ: Եւ զենաւ ոչ վասն միոյ պան կամ ազգատոհմի, այլ ամենայն տիեզերաց աշխարհի, որք հաւատացին տնաւրէնութեան նորա:

**Բարսեղ**: Եւ ասի նա. «Ոչխար ըստ երդ» (Տե՛ս Ելք. ԺԲ:3). այս է՝ անարատ, զի ոչինչ կրեաց[33] ի բնութեանս կեղտոյ ախտից, զոր թշնամին էարկ, այլ մաքրիչ եղեւ սոցունց իւրով մարմնոյն անարատութեամբն եւ աստուածային զաւրութեամբն:

**Մարութա** : Եւ զի ի տասներորդ[34] ամսեանն առեալ լինէր ոչխարն, եւ պահեալ մինչեւ ի չորեքտասաներորդ աւրն: Եւ այս եւս արդեամբք կատարեցաւ ի Քրիստոս, զի ի տասներորդումն Նիսանայ է մուտ յԵրուսաղէմ: Եւ ընկալեալ եղեւ ի հաւատացելոց եբրայեցոցն, եւ պահեցաւ մինչեւ ի չորեքտասաներորդ աւրն, եւ ապա պատարագեցաւ վասն փրկութեան ամենայն աշխարհի:

**Աստուածաբան**: *Կամ զի աւուրքն, որ է ի տասնէ անտի, մինչեւ ի հնգետասաներորդ աւուրն նշանակեսցէ: Զենմամբն Քրիստոսի զմաքրութիւն հինգ զգայարանաց է մերոց, որք եղեն դրունք ախտից մեղաց եւ մահու (Ն՟մմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ 109ա):

«Եւ եթէ սակաւք իցեն ի տանն, որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր զդրացի իւր եւ զընկերի իւր՝ ըստ մարդաթուի, իւրաքանչիւր ոք ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն» (Տե՛ս Ելք. ԺԲ:4):

**Փիլոն**: *Զատուերական զառնն մատուցանելով պատարագ, զամենեսեան միաբանս եւ հաւասարս կամի լինել[35] ի մատուցանելն զնոյն, եւ ոչ անձանց միայն խնամ տանել, այլեւ զդրացիս եւ զընկերս կցորդ առնել[36] ի զենումն պատարագին: Զի վասն պատուականութեան նորին, զամենեսեան հրամայէ հաղորդ լինել զենմանն՝ եւ՛ զմեծամեծս եւ՛ զփոքունս: Մեծամեծացն պատիւ առնել փոքունցն եւ նուազիցն եւ հաւասարել ինքեանց զնոսա ի նոյն

31 *Փիլոն* չիք:
32 *Փիլոն*՝ մահ լինել:
33 Ա կատարեց:
34 Բ տասներորդում:
35 Բ լինիլ:
36 Ա առնուլ:

զենումն: Քանզի զայս յայտ առնէ ասելն՝ թէ իւրաքանչիւր ոք ըստ իւրում բաւականի համարեսցի յոչխարն առ սպուերականն այսպէս: Իսկ առ ճշմարիտսն[37] զենումն քննելի է, թէ զինչ է զդրացիս եւ զընկերս կցորդ առնել զենմանն (Տմմ. Փիլոն, էջ 450, գլուխ Ե ): Նախ ուսուցանէ, թէ որ կատարեալք են հաւատովք եւ մաքրական գործովք, առաքինութեան խնամ տանել եւ անկատար իցեն հոգոցն եւ փութալ ածել զնոսա ի նոյն նմանութիւն ինքեանց, եւ միաբանեալք հաւատովք եւ գործովք Աստուածայնովք հաղորդեսցին մարմնոյ եւ արեան ճշմարիտ զառինն:

**Աստվածաբան:** Դարձեալ խրատէ զնոսա, որք ջեռեալ աստուածային սիրովն, կամիցին խաչակցել Քրիստոսի եւ մատուցանել զմարմինս իւրեանց պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, թէ կարողք իցեն անձամբ յանձին առ այս բաւական լինել՝ մատուսցեն: Ապա թէ աղքատք յիմաստութենէ[38] եւ տկարք ի բարեաց իցեն, մի հեղգասցին առ այս, այլ առցեն աւգնական զընդանիսն եւ զդրացիսն հաւատոց, եւ զազգակիցսն գործոց առաքինութեան՝ զկատարեալսն բանիւ եւ գործովք: Եւ նոցին աւժանդակութեամբ դաստիարակեալք կարողասցին պատրաստել զինքեանս զենումն Աստուծոյ. եւ այս է ասելն, թէ՝ ըստ իւրում կարի համարեալ լիցի ի զենումն: Իբր թէ՝ մի վասն թերակատարութեանն արհամարհեալ լիցի ի կատարելոցն, այլ պատուեսցի կցորդ նոցին լինելովն, ըստ Պաւղոսի, թէ. «Նուազն ի լաւէ անտի աւրհնեսցի» (Տե՛ս Եբրա. Է:7):

«Ոչխար կատարեալ արու տարեւոր լիցի ձեզ յաւդեաց եւ յայծեաց առնուցուք» (Տե՛ս Ելք ԺԲ:5):

**Փիլոն** : Կատարեալ ըստ երկոցունց հրամայէ առնուլ զոչխարն՝ ըստ հասակի եւ ըստ մարմնոյն մասանց, սգայութեան եւ այլոց գործեացն: Քանզի ոչ էր արժան զանկատարն յԱստուածային սեղանն[39] պատարագ հանել: Եւ արու, զի այս կատարելագոյն է, քան զէգն, որպէս եւ բնութեան քննիչքն ոչ այլ ինչ ասացին զոյ զէգն, այլ անկատար արու: Վասն այսորիկ ոչխար, ասէ, առնուլ կատարեալ, այսինքն արու: Եւ դարձեալ զի հրաման[40] էր թագաւորին զամենայն արուսն զեբրայեցւոցն[41] սպանանել, եւ զէգսն ապրեցուցանել[42], վասն այսորիկ արդարադատն Աստուած, որ յանդիմանելով զնորին խակ եւ անսգամ հրամանսն, սպան զանդրանիկս Եգիպտացւոց, իբրաւացոյց արու պատարագաւք զոհանալ նոցա, որոց արուքն ապրեցան ի սատակմանէն (Տե՛ս Փիլոն, էջ 452, գլուխ Է): Վասն այսորիկ յաւել զտարեւորն, զի ի տարին կատարեալ լինի այսպիսի անասուն: Այս ըստ երեւելի տեսութեան, իսկ իմացականապէս առնելիք է ի Քրիստոս, որ կոչեցաւ ոչխար կատարեալ արու:

**Աստուածաբան**: \\Կատարեալ՝ ոչ վասն աստուածութեան միայն է իմանալ, քանզի որ ոչ ինչ է կատարելագոյն, որ զամենայն լնու եւ կատարէ, այլ յաղագս մարմնոյն, զոր էառ եւ էած աստուածութեամբն եւ կատարելագոյնս գործեաց՝ որպէս էր առողին բնութիւն (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ107բ- 108ա):

37 Բ ճշմարիտ:
38 Բ յիմաստութեան է:
39 *Փիլոն*՝ բագին:
40 Բ հրամայել:
41 Բ եբրաեցւոցն:
42 Ա սնուցանել:

**Ասպուածարան**:\\Եւ արու՝ իբրեւ յաղագս Ադամայ ընձայեալ, քանզի եւ Ադամ արու, մանաւանդ զարագոյնին առաջնոյ մարդոյն գլորեցելոյն ընդ մեղաւք, արիագոյնն պռաւ բժիշկ՝ զառնն Ասպուծոյ: Դարձեալ արու է զնա իմանալ վասն սքանչելի ծննդեանն, զի ոչինչ էգ եւ ոչ վարթար յինքեան երեր, այլ արիական բնութեամբ խզեաց զբնութեան կնիք, եւ զկոյսն մայր գործեաց՝ անխախտ մնալով կուսութեան, ըստ բազում իշխանութեան իւրոյ, եւ ծնեալ արու ի մարգարէ կնոջէն՝ որպէս Եսայիա աւետարանէ (Տե՛ս Ասպուածարան, ձեռ. 946, էջ 108ա):

***Մարութա:*** Իսկ պարեւոր. իբրեւ զարեգակն՝ արեգակն արդարութեան Քրիստոս կոչեցաւ, զի որպէս սգալի արեգակն կապարի եւ բաժանէ զեղանակս ժամանակաց, պսակս պարոյն, որ են պտուղք, այսպէս եւ Քրիստոս, որ է արարիչ պարեաց եւ ժամանակեաց եւ գոյացուցիչ ամենայն արարածոց, քաղցրութեամբ խառնէ եւ բաժանէ զեղանակս ժամանակաց, եւ աւրհնէ զպսակս պարոյ ողորմութեամբ իւրով (հմմ. Ասպուածարան, ձեռ. 946, էջ 108ա - 108բ): Եւ նոյն Արեգակնն Արդարութեան եկ ի Հաւրէ եւ երեւեցաւ մարմնով եւ դարձաւ անդրէն առ Հայր իւր: Եւ իւրոց արարածոցս ոչ հեռացաւ, որպէս եւ ի մարմնի գոլով էր առ Հայր, զոր աւրինակ ծագեալ լոյս յարեգակնէ՝ զբոլորս լուսաւորէ, եւ ի նորին բնութենէ բոլորակութեան ոչ հեռացեալ պակասի:

**Ասպուածարան:** *Իսկ զի ոչ յաղեաց միայն, այլեւ յայծեաց առնուլ հրամայէր՝ նշանակելով, թէ ոչ վասն արդարոց միայն, այլեւ վասն մեղաւորաց պատարագելոց էր Քրիստոս: Թ-ուի ինձ վասն սոցա առաւել, ըստ որում եւ մեղաւորք մեծագունի պէտս ունին մարդասիրութեան (Հմմ. ձեռ. 946, էջ109ա-109բ), եւ զի վասն նոցայ առաւել զենաւ, յայտնէ ինքն՝ ասելով. «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշ[խարութեան][43]» (Տե՛ս Մտթ. Թ:13):

«Եւ եղիցի ձեզ պահել մինչեւ ի չորս եւ ի տասն ամսեանս» (Տե՛ս Ելք.ԺԲ:6):

**Փիլոն**: \\Զպատուականութիւն չորեքտասաներորդ թուոյն այսու յայտ առնէ, քանզի սովաւ լուսինն զարդարի, եւ ուռճացեալ ի ժողովմանէ[44] աւուրց, փեառղացն[45] երեւի լուսլիր (Տե՛ս Փիլոն, էջ 453, գլուխ Թ):

**Մարութա**: Այսպէս եւ լոյսն անսկիզբն ծագեալ ի Հաւրէ, ի չորեքտասաներորդն Նիսանայ լրացուցեալ, կատարեաց զփրկական փնաւրէնութիւնն՝ իւր գալով կամաւ ի մահ խաչի վասն մեր: Եւ զենցեն զնայ ամենայն բազմութիւն ժողովրդեանն որդոցն Իսրայէղի ընդ երեկս:

*Ընդէ՞ր ամենայն բազմութեան հրամայէ քահանայագործել եւ զպատարագն մատուցանել (Հմմ. Ելք. ԺԲ:6):

**Փիլոն** : *Առաջին. զի ոչ զոյր պաճար հաստատեալ, եւ ոչ սեղան, եւ ոչ ղեւտական ազգն միայն որոշեալ ի քահանայութեան պատիւ: Զիւրաքանչիւր ուրուք զպունն պաճար եւ սեղան[46] երեւեցոյց, այլեւ քահանայ, զի յառաջնում պատարագին մի՛ ոք առաւել զպցի: Եւ

43 *Ասպուածաշունչ* չիք:

44 *Փիլոն*՝ ժողովրդոցն:

45 *Փիլոն*՝ զգաչութեանն:

46 *Փիլոն*՝ բագին:

երկրորդ՝ վասն զի զոյգ եղեւ ազատութիւնն, եւ հաւասար ամենեցուն ապրեցան անդրանիկքն: Զոյգս արժանի արար զամենեսեան զշնորհակալութեան քահանայագործել պատարագ: Եւ [երրորդ][47]՝ զի որպէս Եգիպտացոցն հաւասար գոլոյն՝ ի չարիս վկայ եղեւ հաւասար պանջանքն նոցա, այսպէս եւ Իսրայելացոցն զոյգ բարէպաշտութեան յայտնիչ լիցի միաբան քահանայագործելն (Տմմ. Փիլոն, էջ 454, գլուխ Ժ): Չորրորդ. \\իրաւ եւ արժան համարեցաւ յառաջ քան զընտրել զըստ մասինն քահանայս, ամենայն ազգին շնորհել զքահանայութիւն, զի մի մասամբ բոլորն, այլ մասն բոլորին զարդարեսցէ: Եւ զի զկնի եկեալ մասնաւոր քահանայութեան՝ բոլոր ազգին քահանայագործելն սկզբնատիպ եղիցի: Նայ եւ զի՞նչ է գեղեցկագոյն, քան զպաշտաւն Աստուծոյ յամենեցունց կատարիլ: Հինգերորդ. զի կամեցաւ զմի մի յիւրաքանչիւր ուրուք զտուն զտանուտէրն այնպէս սրբագոյն գործ գործել, եւ մի ինչ ամենեւին պղծութիւն ընդունել՝ որպէս քահանային սրբելոյ յամենայն մեղաց, յորս միանգամ ասիցէ եւ գործիցէ: Եւ իմանայցէ եւ ժողով ասէ զնոսա, զի ոչ մարմնովն միայն, այլեւ հոգով եւ մտաւք, եւ ժողովէին ի քահանայագործելն (Տե՛ս Փիլոն, էջ 454, գլուխ Ժ):

Առ հին Իսրայէլ այսպէս, իսկ առ նոր Իսրայէլ ամենեցուն աւրինադրէ քահանայագործել, եւ զենուլ զմարմին իւր պատարագ Աստուծոյ կենդանի եւ հաճոյ: Այլեւ զոյգ եւ միաբան ճաշակել ի մարմնոյ եւ յարենէ ճշմարիտ զառինն Աստուծոյ Հաւր՝ անարատ հաւատով եւ մաքուր գործով:

**Փիլոն**: \\Այլեւ ի ճաշակելն զնոյն մարմնով եւ հոգով ժողով լինել[48] եւ միաբան, ընդ երեկ, ասէ, զենցեն: Քանզի ազատութիւնն ի գիշերի հանդերձեալ էր լինել, ոչ էր պատշաճ[49] ի նոյն ժամացն[50] զպատարագս[51] մատուցանել ի խաւար գիշերին, այլ յառաջ, քան զիններորդ[52] ժամն պատրաստեալ[53] այնոցիկ, որ հանդերձեալ էին ի գիշերի բարիս գտանել, ապա ուրեմն զառ ի յերեկս միջասահման ժամանակն ընդ տիւ եւ ընդ գիշեր, ոչ վայրապար գիտացեալ կշռեաց մարգարէն (Տմմ. Փիլոն, էջ 456- 457, գլուխ ԺԱ):

**Ասպուածաբան**: *Ոչխարն յայսմ ժամու ասացաւ զենանիլ նշանակելով, թէ ի վախճան ժամանակին[54] լինելոց էր զենումն Քրիստոսի, ըստ որում եւ ինքն կենդանարարն ընդ երեկս հաղորդեաց զաշակերտսն սուրբ խորհրդոյն՝ առ ի լուծանել ի մենջ զխաւար մեղաց (Տմմ. Ասպուածաբան, ձեռ. 946, էջ 111ա):

«Եւ առցեն յարենէն եւ դիցեն ի վերա երկուց սեմոցն եւ բարաւորի տանն, յորս ուտիցեք զնա[55] ի նոսա» (Տե՛ս Ելք. ԺԲ :7):

**Փիլոն**: Որպէս ասացաւ յառաջագոյն, զի ի ժամանակին իբրեւ բազին եւ տաճար ||եղեալ էր[56] ամենայն տուն տեսական ազգին, *ուստի յիրաւի յաստուածային պատարագաց

47 ԱԲ՝ երկրորդ:
48 *Փիլոն*՝ դէպ լինել:
49 *Փիլոն*՝ սովորութիւն:
50 Ա ժամ:
51 Ա զպատարագն:
52 Ա, *Փիլոն*՝ զինն:
53 Բ պատարագեալ:
54 Ա ժամանակիս:
55 Ա զնոսա:
56 Բ եղեւ:

յարենէն նուիրի ի վերա սեմոց խիրաքանչիւր դրացն դնել արժանի առնէ (Նմմ. Ելք. ԺԲ:7), \\ միանգամայն եւ քամահել զթշնամիսն: Իբր ոչ թէ երկեղի, այլ որպէս ի ցոյց[57] առնելով եւ բազում համարձակութեամբ մատուցանենն նոքա զպատարագն[58] (Տե՛ս Փիլոն, էջ 457-458, գլուխ ԺԲ):

**Ասպուածարան**: Առ հին ժողովուրդն մարմնապէս այս: Իսկ առ մեզ հոգեպէս կատարեցաւ, քանզի իբրեւ զենաւ Քրիստոս՝ ճշմարիտ գառնն վասն մեր, պատուական արեամբ նորա կնքեցան գործք մեր եւ բանք, այլեւ[59] ազդայարանք մարմնոց մերոց, որք իբրեւ[60] դրունք եւ սեմանք են մտաց մերոց շարժմանց:

**Մարութա**: Եւ կնքին սոքա, զի կրթեսցին փակիլ մեղացն անչափ պեսութեանց եւ բանիլ առ յընդունել[61] զշնորհսն Աստուծոյ եւ զբարիոք պեսութիւնն, եւ զգեղեցիկ աւանդութիւնսն: Եւ ի սոցա ուղղապէս կեալ՝ ոչ վնասի. յապականող են առաջնորդականս մեր միտք, եւ ոչ սպանեալ լինին սորին անդրանիկքն[62], որք են առաջին եւ երիցագոյն խորհուրդք եւ բարիոք իմացմունք:

«Եւ կերիջիք զմիսն ի գիշերիս յայսմիկ խորովեալ հրով» (Տե՛ս Ելք. ԺԲ:8):

**Փիլոն**: \\ Հրամայէ զայս նախ վասն արագութեան, քանզի եւ զաղթին փութացուցանէր: Երկրորդ՝ վասն անխառնութեան, քանզի խորովեալն պարզագոյն եւ առանց պաճուճանաց կազմի: Երրորդ՝ յղփացեալ կեանս փափկութեանս[63], եւ բազում ժամանակս յամել ի նոյն, ոչ առնու յանձն, քանզի եփեալն զանազանութեան ցոյցք են եւ համեմելոյ (Տե՛ս Փիլոն, էջ158-159, գլուխ ԺԳ): Տեսցո՛ւք, թէ առ ճշմարիտ զենումն զիարդ պեսանի այս:

**Մարութա**: Ասացեալս նշանակէ, թէ յաշխարհիս յայս մի կորէ գիշեր մեղաց, զի որքան մեք[64] ասպ մեղաց ծածկեալ եմք՝ իբրեւ ի խաւարի, ի մաքրագոյն պեսութեանց անմարմնոցն եւ երկնայնոցն պարփիմք առաքինութեամբ մաքրել զմեզ, եւ այսպէս ճաշակել զմարմին եւ զարիւնն Քրիստոսի: Զի յորժամ հասանիցէ աներեկ առաւօտն, այսինքն՝ հանդերձեալ աշխարհին, յանսպուեր ճառագայթս նորա խառնեալ, լուսաւորեսցուք: Իսկ զինչ խորովեալն հրով. ուսուցանէ զմեզ ի ճաշակելն զայս գառն ի կենցաղոյս՝ գիշեր. ոչ սառն եւ պաղ լինել, այլ վառիլ եւ ջեռնուլ Ասպուածային հրոյ նորա սիրով, զոր էարկ յերկիր:

« Եւ բաղարջ ընդ եղիգի կերիջիք» (Տե՛ս Ելք. ԺԲ:8):

**Փիլոն**: \\ Բաղարջն բազում փութոյ եւ արագութենէ: Իսկ դառնիճն զդառնութիւն, եւ ի վշտալի կենաց, յորում ծառաեալք համբերէին (Տե՛ս Փիլոն, էջ 459, գլուխ ԺԵ):

**Մարութա**: Ասացեալս այլաբանութեամբ խրատէ. որք ճաշակեն զմարմին եւ զարիւնն

57 Ա ցոյցս:

58 *Փիլոն*՝ Աստուծոյ շնորհաց:

59 Ա կամ:

60 Ա իբրու:

61 Ա ընդունել:

62 Ա դրանիկք:

63 Բ փափկութեան:

64 Ա եմք:

Քրիստոսի. այնպիսի մաքուր վարս սպանալ՝ իբր զի ազատ լիցի յամենայն խմորոյն եւ հնացեալ քացախուտ չարութեանց, եւ առ զա[նա]զան նեղութիւնս[65] եւ դառնութիւնս, որ ||գան հասանեն[66] ի վերա մեր, համբերողս եւ ժուժկալս լինել, քանզի եւ այսպէս իսկ ճշմարտապէս կերան առաքեալքն զպասեքն աւրինական ընդ եղեգի: Զի յորժամ ասաց Քրիստոս. *եթէ եհաս ժամանակ իմ չարչարիլ ի Հրէյից (Հմմ. Մտթ. ԻԶ:46), լցան դառնութեամբ ի տրտմութենէն, նայ եւ այլ չարչարանս եւ մահս կրեցին[67] նոքա վասն Քրիստոսի, եւ ամենայնի տարան առաքինութեամբն: Եւ զինչ այն, զոր յառաջ երթեալ, դարձեալ վասն խմորոյ պատուիրէ. « Զյոթերորդ աւր, աւէ, բաղարջ կերիջիք եւ զխմոր անհետ արարեք ի տանց ձերոց» (Տե՛ս Ելք. ԺԲ:15): Պատուեր այս դարձեալ վասն մաքուր վարուց. եւ առաքինի գործոց[68] է, որպէս զի պարտ է մեզ յեաւթնեակ շրջագայութեանս[69] այսմիկ սրբել յանձանց զհին խմորն, որ են ամենայն գործք չարութեան, եւ լինել նոր[70] զանկուած, եւ հաճոյ Աստուծոյ յամենայն գործս բարիս: Եւ ժամանեալ անարատութեամբ ի սուրբ նուիրեալ աւրն, որ է կատարումն յեաւթներորդիս եւ մուտ ութներորդի զալստեանն Քրիստոսի, եւ հանգիստ ի տաժանմանց կենցաղոյս:

**Աստուածաբան**: *Դարձեալ խմորոյն ոչ լինելն (Հմմ. Ելք. ԺԲ:15) *ուսուցանէ պարզ եւ անխառն վարդապետութեամբ կերակրիլ, եւ մի ինչ խաւարային եւ մարդկան աւանդեալն եւ անաստուած գիտութեամբ (Հմմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ 111ա): \\ Եւ դառնիճն յաղագս դառն եւ զառ ի վեր զոլ, որ ըստ Աստուծոյ են, վարք ուսուցանէ սկսաւղացն զնոյն եւ մանաւանդ քան զհեշտութիւնսն բարձրագոյն: *Քանզի թէպէտ եւ քաղցր է նորա լուծն, եւ թեթեւ բեռն[71]՝(Հմմ. Մատթ. ԺԱ:30) որպէս լսես, այլ վասն յուսոյն է այս եւ փոխարէն հատուցմանն, քանզի յոլով են կենցաղոյս չարչարանաց եւ նեղութեանց առատութիւնք: Ով ոչ ասիցէ սաստկագոյն, քան զաւրինական հրամանսն, զԱւետարանին դժուարին լեալ եւ տաժանելի. վասնզի աւրէնքն զկատարումն մեղացն արգելուին: Իսկ Աւետարանն եւ ի պատճառացն՝ իբրեւ ի գործոց զգուշացուցանէ զմեզ. (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ113բ) *անդ շնութիւն արգելաւ եւ սպանութիւն, եւ աստ հայիլն արատ, եւ բարկանալն տարապարտ. այսպէս եւ այլքն (Հմմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ113բ-114ա): «Եւ մի ուտիցեք ի նմանէ հում, եւ ոչ պախ եփեալ ջրով, այլ խորովեալ հրով» (Տե՛ս Ելք. ԺԲ:9): Որ ինչ ըստ ճառի սէր ասացաւ յառաջագոյն, թէ վասն արագութեան զաղթին էր: Իսկ զինչ ասելն՝ «Մի ուտիցեք ի նմանէ հում» (Տե՛ս Ելք. ԺԲ:9) եւ ո՞վ ոք ի մարդկանէ հում ուտիցէ միս, եթէ ոչ յայտ յանդիման, որ ի Քրիստոս խորհուրդն նշանակէ[72]:

**Աստուածաբան**: Իբր[73] թէ հաւատացելոցն ի տնաւրէնութիւն նորա՝ ոչ է արժան ընդունել, որ յաղագս նորա բանն է սոսկ վարկպարազի, եւ ոչ զբան հաւատոյն առանց իմանալի տեսութեանց մատուցանել: Այլեւ ոչ լուծանել անարժան քնութեամբք ոմամբք. այսինքն

65 Բ չարութիւնսն:
66 Բ հասանեն զան:
67 Բ կերիցեն:
68 Բ զործ:
69 Ա շրջագայութեան:
70 Ա նորա:
71 Ա բանն:
72 Բ է նշան:
73 Բ իբրեւ:

ոչ ամենևին հում եւ անքննին թողուլ զխնարէնութեանն Քրիստոսի խորհուրդ զառ ի նայն հաւատ, իբր թէ ոչինչ ունին իմանալի տեսութիւնս: *Բայց եւ ոչ ջրատեսակ եւ լոյծ բանիւ ի խոյզ եւ ի խնդիր անկանիլ եւ քննել: Այլ զինչ խորովիլ հրով, այսինքն յամենայն նիւթականացս[74] պաճուճանս[75] ի բաց լինել: Որպէս խորովեալն միս եւ բարիոք կայծակամբք[76] հրոյն, զոր հուրն երկնային էարկ ի յերկիր, եւ զբորբոքեալն փութայ ծախել յառաջնորդական մտաց մերոց զամենայն չար խորհուրդս եւ զաղտեղի մտածմունս: Եւ կարծր եւ պինդ խորհրդով եւ ճշմարիտ հաւատով հաստատել ի տնաւրեննութեան նորա խորհուրդ (Տե՛ս. Աստուածաբան, ձեռ. 946, էջ111բ):

**Փիլոն**: *Կամ ըստ ումեմն իմաստնոյ խրատէ այս յառաջատեալ[77] հոգոցն յառաքինութիւն[78] (Տե՛ս. Փիլոն, էջ 460, գլուխ ԺՁ), \\թէ յորժամ փոփոխին ի վատթարութենէ ի լաւութիւն, մի՛ ի հում եւ ի խակ ապաշխարութենէ ուտել, այլ ջեռուցանելով զնա, այսինքն ջերմն բանիւ եւ արտաշիկացելովք պատրաստեալք: Քանզի բազումք յանկարծակի առ հակառակսն փոփոխին յանկարծաւրէն անմիտ հարձակմամբ՝ յանխնայութենէ ի խնայութիւն, եւ ի վայրենի եւ ի պաճուճեալ փափուկ կենաց ի խստավարութիւն եւ ի փառասիրութենէ թեւակոխեն յանփառութիւն, զորս ոչ ոք գովեսցէ: Քանզի հում եւ խակ է ||փոփոխումն այսպիսեացն[79], վասն որոյ ոչ յառաքինութիւն, այլ ի հակառակ չարութիւնս ||ոչ իմացան փոփոխեալք[80]: Իսկ որք[81] մի անգամ բանիւ գիտութեան փոփոխեալ յարմարին՝ իբրեւ ի հրոյ բռնադատեալք, հաստատուն եւ անշարժ ստացեալ ունին զաւգտութիւն (Տե՛ս Փիլոն, էջ 460 ԺՁ):

«Զգլուխն՝ ոտիւքն հանդերձ, եւ զփորոտի նորա» (Տե՛ս Ելք. ԺԲ:9):

**Փիլոն**: *Զմասունս զայս յիշելով՝ զբովանդակ պատարագն պատշաճ համարի կեռակրիլ, եւ ոչինչ[82] թողուլ յարինական զառնէն (Տե՛ս. Փիլոն, էջ 461, գլուխ ԺԷ):

**Աստուածաբան**: Իսկ առ ճշմարիտ զառն՝ Քրիստոս, այսպէս ||իմանալի է[83] զասացեալս. որք արժանաւորեցան հաղորդ լինել մարմնոյ նորա եւ արեան, որք անկարողութիւն է մտաց եւ բանի՝ հասանել ի տնտեսութեան Քրիստոսի խորհուրդ,

***Մարութա***: հաստատուն հաւատով քննեսցեն, եւ \\ի ներքս ի միտսն կերիցեն եւ ծախեսցեն, եւ հոգեւոր հայմամբ ի վեր տացեն՝(Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ 111բ) ի յաճումն հոգեկան մասանց, եւ այսպիսի մասամբք, զոր յիշեաց, ընդ միտ ածել զԱստուածութիւնն եւ զմարդկութիւնն եւ զխնարէնութիւն նորա: *Քանզի գլուխն նշանակէ զաստուածութեան զտեսութիւն, եւ ոտք՝ զմարմինն, զոր ի վախճան ժամանակի զգեցաւ (Տե՛ս. Աստուածաբան, ձեռ. 946, էջ111բ-112բ), եւ փորոտի՝ զխնարէնութեանն խորհուրդ, որ յոյժ ծածուկ

74 Ա նիւթականաց:
75 Ա պաճուճանաց:
76 Ա կայծմամբ:
77 Բ յառաջատել:
78 Բ առաքինութիւն:
79 Բ այնպիսի փոփոխումն:
80 Բ փոփոխեալք ոչ իմացան:
81 Բ որ:
82 Բ ոչ:
83 Բ է իմանալ:

եւ անծանաւթ է, եւ բարձր, քան զմիտս եւ զբանս: Արդ կերակրիլ մտացն կոկորդի՝ զայսպիսի քննութեան կերակուր է. այսպէս, թէ նա, որ Աստուած էր՝ արարիչն եւ սկիզբն, եւ գլուխ ամենայն եղականաց, վասն փրկութեան մարդկան՝ զառ ի տեղի ոտից համարեաւ մարմինս զգեցաւ: Եւ նման փորոտեաց ծածուկ տնաւրէնութեամբ, զոր գործեացն, արար փրկութիւն, վասն որոց եղեւ զայս:

«Եւ ոչ թողուցուք ի նմանէ յայգ. եւ ոսկր մի բեկանիցէք ի նմանէ, եւ որ ինչ մնասցէ ի նոցանէ յայգ հրով այրեսջիք» (Տե՛ս Ելք. ԺԲ:10):

**Փիլոն**: Այրել հրամայեաց զմնացուածս առաջին, զի ոչ համարեցաւ արժանի՝ \\արեգակն ծագել ի վերա պատարագի անցարանացն (Տե՛ս Փիլոն, էջ 461, գլուխ ԺԸ), *եւ վասնզի ի գիշերի եղեւ ազատութիւն, ի գիշերի հրամայէ՝ զպատարագին այրել զմնացեալս: Եւ երրորդ, զի ըստ սովորութեան ի դէպ էր վասն փութոյ ելիցն արհամարհել եւ այսր անդր ընկենուլ զնշխարս զոհին: Եւ եկեալ Եգիպտացիքն ի վաղիւ անդր անսուրբ եւ պիղծ ձեռաւք շաշափէին զնշխարսն եւ անպատուէին: Վասն որոյ զգուշացեալ, զի մի այս լիցի[84], հրամաեաց ընծայել անպիղծ թագաւորին. այս է՝ հրոյն առ ասացեալվքս տեսցուք, թէ զիարդ յարմարի[85] եւ ի հոգեւոր տեսութիւնս (Հմմ. Փիլոն, էջ 461, գլուխ ԺԸ):

**Աստուածաբան**: Զգուշութիւն է ասացեալքս[86] հաւատով ճաշակողաց՝ զիմաստս փրկագործութեանցն Քրիստոսի մտացն ապամամբք ծածուկ ունել եւ թաքուն՝ յանսրբազանիցն. «*Եւ մի տալ զսրբութիւն ի շանց, եւ զմարգարիտն անմտաց խոզացն[87]» (Տե՛ս Մատթ. Է: 6) (Հմմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ112բ): *Այլ ըստ աւրինակի գիշերի անփոփել, եւ ոչ այգ, եւ յայտնի լուսաւորել խաւարելոցն մտաւք (Հմմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ112ա): Այլեւ նոքին իսկ հաղորդեալքն գիտութեանն Քրիստոսի, մի՛ յանդգնաբար ի վերա արձակեալ ամենայն գործոցն հետաքրքիրք լինիցին: \\Այլ որ մի անգամ ոսկրոտ եւ անուտելիք իցեն եւ դժուարաւ տեսանելի, մի խորտակեսցեն չար[ա]չար բաժանեալ (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ112բ), *որպէս եւ ոչ յԻսրայէլին խորտակեցաւ ի խաչին, զի մի՛ բանին ամձպաւղաց ծաղր կացուցանեն, այլ նոցա թողցեն, որք[88] հոգովն մաքրեալ եւ անաւսրեացեալք են (Հմմ. Աստուածաբան, ձեռ.946, էջ112բ): Եւ ի նմանէ տեղեկացեալք խորհրդոցն Քրիստոսի. եւ ինքեանք յայտնեցելովք ինքեանց՝ բաւականասցին գիտութեամբ, եւ կամ նորին հոգոյն թողցեն ըստ Մովսիսի, թէ յայտնիքն մեզ, եւ ծածուկքն՝ Տեառն Աստուծոյ: Իսկ զինչ այն, թէ զմնացեալն՝ յայգ հրով այրեսջիք, այսինքն, թէ զծածուկսն, զոր ոչ կարացիք գիտել: Մի՛ վասն զի ոչ լինիցիք[89] հասու, երկբայիցէք, եւ կամ տխրեսջիք, ինչ զի ոչ միշտ, այլ որք անեմք[90] ի գիշերատիպ կենցաղս, յայլս[91] ծածկեալ են ի մէնջ, եւ ունին յայտնիլ յիւրում ժամանակ, ի միւս անգամ գալստեանն, զոր այգ անուանէ, այլ հրով Աստուածային ջեռեալք. սպասեցէք, զի զմնացեալսն ի խորոցն Քրիստոսի ի լուսափայլ նորա գալստեանն ծանիջիք:

84 Ա լինիցի:
85 Բ յարի:
86 Ա ասացեալս:
87 Բ խոզիցն:
88 Բ որ:
89 Բ եղէք
90 Բ անեմ:
91 Բ յայլք:

**Մարութա**: «Կամ զի այժմ տեսանեմք, իբրեւ ընդ հայելի, այլ յայ[ն]ժ[ա]մ դէմ յանդիման» (Տե՛ս Ա. Կորն. ԺԳ:12), իբր թէ հրով այրիլ զայն, ասէ թէ զոր այժմ տեսանեմք, յայգանման զալուստն իբր հրացեալք եւ լուսաորեալք, եւ սրբագոյն տեսանիցիմք:

Դարձեալ այգ իմանալի է զմարմնով զալուստն Քրիստոսի, որ լուսաորեաց զմեզ ի խաւարէ կռապաշտութեան եւ ազատեաց ի հրէական արհնացն ծառայութենէ: Արդ խրատէ, թէ զմնացեալն առ ձեզ ի հրէական խտրութեանցն, եւ ի հեթանոսական անառակութեանցն յառաւօտ՝ զալստեանն Քրիստոսի, այրեսջիք իմաստութեան հրով:

**Աստուածաբան**: Առ այսու իմանալի է, թէ ուսուցանէ զմեզ, որք անեմք ի կենցաղս, յայս կերակրիլ առաքինութեամբ եւ մաքուր վարուք, եւ ոչ հեղգալ եւ ի յայգ, եւ ի վաղիւ ընկենուլ: Զի այսաւր է աւր փրկութեան եւ ժամանակ ընդունելի, զի զոր աւրինակ զբարկութիւնն առ եղբայրն հրամայեաց ոչ յայգ հանել, այլ նախքան զմտանել արեւուն՝ լուծանել, նոյնպէս եւ զվարուցն կերակուր մի՛ յերկուս գիշերս առնել եւ յառաջիկայսն ամբարել, այլ ի գիշեր կենցաղոյս յայս ջանալ:

\\Արժան է, եւ ոչ զուտեյոյն աւրինակաւ զանց առնել, քանզի եւ ոչ աւրէնքն մինչեւ յայսոսիկ միայն թողին զտեսութիւն վասպակասիրացն: Արդ ասէ. «Եւ այսպէս ուտիջիք. գաւտիք ձեր՝ ընդ մէջ, եւ կաւշիկք ձեր՝ յոտս, եւ ցուպք ձեր՝ ի ձեռին (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ 113ա), եւ փութանակի կերիջիք, զի զատիկ Տեառն է» (Տե՛ս Ելք. ԺԲ:11):

**Փիլոն**: \\Ամենայն ասացեալքս առակ աւրինակի ուղղեգնացութեան պազնապեցելոց են, քանզի սովորութիւն է, որ ճանապարհ երկայն հանդերձեալ են վճարել, ագանել[92] կաւշիկս եւ հանգրիճել զաւտեաւ, եւ ցուպ առ ի պէտս ունել: Վասնզի կաւշիկք ոտից են պահպանք, իսկ հանգրիճել մատուցան ոլորքցն՝ զդիւրաւ շարժմունսն, իսկ ցուպ առ ի յենուլ՝ է աւգտակար, եւ առ ի վանումն թունաբեր սողնոցն եւ այլոց գազանաց (Տե՛ս Փիլոն, էջ 462, գլուխ ԺԹ): Որ վասն հին զատկին խրատ այսպէս, իսկ վասն նորոյ զատկիս եւ ճշմարիտ զենմանս. եւ հոգեպէս[93] առնիլ է զասացեալս:

**Աստուածաբան**: Զի պարտ է, որք կոչեցան ի Քրիստոս մկրտութեամբ, եւ վայելեցին ի մարմին եւ յարիւն նորա, *մի թոյլ եւ արձակ ունել զմէջս՝ ըստ անբանիցն յարձակման, այլ զօտեաւ ողջախոհութեան պնդել եւ զսպել զտեղին, յորում բունեալ է բազմագլուխ վիշապն՝ ըստ Պաւղոսի. «Շուրջ զաւտի ածել զմիջովք ձերովք ճշմարտութեամբ» (Տե՛ս Եփես. Զ:14), եւ հանգրիճել եւ ի վեր դարձուցանել զամենայն ցանկութիւնս յԱստուած եւ յաստուածայինս, եւ մաքրապէս ուտել զպատնս. մեռուցանել զանդամս զերկրաւորս, եւ *Յովհաննու նմանել, որ յաւրինակ մաշկեղեն զաւտոյն սպան յինքեան զամենայն ինչ հին մարդոյն (Նմմ. Մատթ. Գ:4, Մարկ.Ա:6) (Նմմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ 114բ):

\\Դարձեալ եւ զաւտի ածեալ՝ զհնոթականն զիտեմք եւ զարիականն, ըստ որում քաջազաւտիք առրիք, եւ միազաւտիք ոմանք ասին, որպէս եւ ընդ Յովբայ խաւսելով, Աստուած ասէր «Ոչ այդպէս, այլ ա՛ծ զաւտի՝ իբրեւ այր ընդ մէջ քո, եւ տուր պատասխանի» (Տե՛ս Յովբ. Խ:2) արիական եւ աստուածայինն: Դաւիթ զաւտի ածեալ զզաւրութիւնն յԱստուծոյ՝ մեծամեծս պարծի (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ 114բ-115ա) ասելով. «Որ զգեցուցեր ինձ զաւրութիւն ի պատերազմի» (Տե՛ս Սաղ. ԺԷ:40), եւ վասն այս ասէ. «Զգեցաւ Տէր զաւրու-

92 Ա զգենուլ:

93 Ա հոգեւորապէս:

թիւն ընդ մէջ իւր ածաւ» (Տե՛ս Սաղ. ՂԲ:1), որ եւ զմեզ խրատէ՝ զգենուլ զսպառազինութիւնն Աստուծոյ, եւ արիաբար զինուորիլ ի պատերազմ ընդ անմարմին պատերազմողին մեր, եւ այսպէս արժանաւորիլ ճաշակման երկնաւոր Գառինն:

*Իսկ զկաւշիկն կրկին է իմանալ, որք[94] ի սուրբ երկիրն եւ յաստուածակոխ լեառն յիմանալի աշխարհին հանդերձեալ են մտանել, *պարտ է լուծանել զկաւշիկս, որպէս եւ Մովսէսն այն ի լերինն, (Տնմ. Ելք. Գ:5) այսինքն՝ մի ինչ մեռելոտի եւ անկենդան եւ անասնային ունել վարս յինքեանս: Այլ իբրեւ զաշակերտ առեալ յաւետարանն իմաստասիրաբար, եւ առանց աւելորդաց կեանս ստանալ (Տնմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ115բ), *որում պարտ է առանց[95] պղնձոյ եւ առանց զաւազանի (Տնմ. Ղուկ. Թ:3), եւ միով պատմուճանաւ եւ մերկոտն եւս լինել, զի երեւեսցին ոտքն՝ իբրեւ գեղեցիկ աւետարանչացն զխաղաղութիւն եւ զայլ ամենայն բարի (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ 115բ):

*Բայց որ չափեն յեգիպտական կենցաղս, եւ ի փախուստ զինքեանս տորին գործոց պատրաստեն[96] (Տնմ. Աստուածաբան, ձեռ. 946, էջ 116ա), պարտին զգենուլ զպատրաստութիւն Աւետարանին՝ իբրեւ զկաւշիկ յոտս, \\յաղագս այլոց ամրութեանց, որ առ կարիճս եւ աւձսն: Այս է զանազան ախտս եւ հեշտութիւնս, զորս յոլովագոյն Եգիպտոս կենցաղոյս այս սնուցանէ, զի մի վնասեսցի յայնմանէ, *որ սպասէ զարշապարի, զորս կոխել ||հրաման առաք[97] (Տնմ. Ծննդ. Գ:15) (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ115բ):

\\Եւ յաղագս զաւազանին այսպէս ունիմ եւ վասն նորին առակի. զմին ի յեննույն աւրէնքն հրամայեն, զի մի ուրեք խորհրդովդ թիւրեսցիս արդիւն Աստուծոյ, եւ չարչարանս լսելով, եւ մահ մի ուրեք ի վայր անկցիս անաստուածաբար՝ իբրեւ Աստուծոյ ջատագով: Այլ առանց ամաւթոյ եւ յերկուանալոյ կեր զհացն, արբ զարիւնն, եթէ կենաց փափագեսցես[98]: Մինչ որ յաղագըս մարմնոյն են փառք[99], թերահաւատասցես[100], եւ մի՛ ոք յաղագս չարչարանացն վնասեսցիս, այլ յեցեալ կացցես՝ հաստատուն, անշարժ: Եւ ոչ ի միոջէ ումեք դրդուեալ յընդդիմակցացն եւ ոչ հաւանական բանիւք ի վայր քարշեալ, ի բարձրութեան նորա կացջիր, ի գաւիթսն յԵրուսաղեմ կացուսցես զոտս ի վերա վիմին յեցոյ, զի մի սասանեսցին քո՝ ըստ Աստուծոյ գնացք (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ 116ա-116բ):

**Բարսեղ**: Գաւտի զպնդակազմութիւն նշանակէ Սուրբ Հոգոյն սիրով, եւ կաւշիկ՝ զպատրաստութիւն Աւետարանին, *ցուպն՝ զխաչն ասէ, զոր առնուլ եւ զհետ գնալ հրամայեաց (Տնմ. Մատթ. ԺԶ:24, Մարկ. Ը: 34, Ժ: 21, Ղուկ. Թ:23, ԺԴ: 27), որ են վիշտք եւ չարչարանք: «Եւ փութանակի կերիջիք» (Տե՛ս Ելք. ԺԲ:11), այսինքն՝ մի ծոյլ եւ հեղգ գտանիլ առ նեղութիւնս, որ գան ի վերա մեր, այլ՝ փոյթ եւ արի գիտել, զի յետ ատ ի նեղութեանցս զատիկ եւ ուրախութիւն լինելոց է մեզ, որ պատրաստեցաւ Տեառն Քրիստոսի չարչարանաւքն:

«Եւ անցեալ ընդ ամենայն երկիրն Եգիպտացոց հարից զանդրանիկս դոցա: Եւ զձերդ

94 Ա որ:

95 Ա աւելորդ:

96 Բ պատրաստեսցեն:

97 Բ հրամանաւք:

98 Բ փափագիցես:

99 Ա բանք:

100 Ա ոչ հաւատասցես:

ապրեցուցից՝ վասն նշանակի արեանն. եւ յամենայն աստուածսն Եգիպտացւոց արարից վրէժխնդրութիւն, զի Ես եմ Տէր» (Տե՛ս Ելք. ԺԲ :12):

**Փիլոն**: *Զամենայն զանհաստատ եւ զխոտան աստուածսն, որք մինչեւ ի վայր մի թոյլ տալովն Աստուծոյ՝ յաջողեցան, խոստանայ ի բաց բառնալ, եւ զինքն միայն ցուցանել Տէր, որպէս եւ է ճշմարիտ (Նմմ. Փիլոն, էջ 463, գլուխ Ի):

**Եփրեմ**: Առակաւ ասացեալքս արդեամբք[101] կատարեցան ի ծննդեանն Քրիստոսի, քանզի յորժամ եմուտ նա յԵգիպտոս, փախստեամբ խորտակեցաւ ամենայն կուռքն նորա: Եւ նոյն ինքն արարիչ եւ յայտնիչ նոցա, սատանա իսկապէս կործանեցաւ ի ժամ մահու նորա, ըստ այնմ, թէ. «Իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս» (Տե՛ս Յովհ. ԺԲ:31): Այլեւ անդրանիկք նորա սպանեալք եղեն, որ են կամարարք եւ հրեշտակք նորին. դեւք սանդարամետականք, եւ կամ առաջին եւ երիցագոյն չար խորհուրդք նորա, զոր ուսոյց որդոց մարդկան: Իսկ ազատելոցն արեամբ գառինն, եւ կնքելոցն աւծմամբ, ապրեցան անդրանիկք, որք ըստ Աստուծոյ բանք եւ գործք, կամ ունակութիւն եւ զաւրութիւն:

**Աստուածաբան**: \\Աստուստ վերջին եւ ծանրագոյն հալածանացն հարուած, եւ գիշերոյ արդար եւ արժանաւոր, եւ ողբայ զանդրանիկսն գիրոյ զխորհրդոցն եւ զգործոցն Եգիպտոս, զոր եւ սերմն քաղդէական արտաքս ընկեցեալ գիրք կոչեն, եւ տղայք Բաբելոնացիք վիմաւ փշրեալք եւ լուծեալք, եւ գոչմամբ ամենայն լի եւ աղաղակաւ Եգիպտացւոց: Եւ ի մէնջ ի բաց հեռանայ յայնժամ նոցա սատակիչն՝ պատկառանաւք եւ երկեղի աւծմանն (Տե՛ս Աստուածաբան, ձեռ. 946, էջ110բ-111ա):

**Մարութա**:Եւ արդ, վասն զի զհինն ընդ նորոյս խորհրդոյ համեմատեալ, ըստ կարի ցուցաք, բեր այսուհետեւ զնոյն ինքն՝ զխորհուրդն, որ այսաւր ի Քրիստոսէ աւանդեցաւ՝ պատմեսցուք, հետեւաբար՝ ըստ սրբոց աւետարանչացն ճառից: Արդ ուսուցանէ զմեզ յուսփայլ աւետարանիչն՝ Մատթեոս, այսպէս ասէ. «Յառաջնումն աւուր բաղարջակերացն, մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն. «Ո՞ւր կամիս, զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն»: Եւ նա ասէ ցնոսա. «Երթայք ի քաղաքն առ այս անուն, եւ ասացէք ցնա. «վարդապետ ասէ՝ ժամանակ իմ մերձեալ է. առ քեզ առնեմ զզատիկս աշակերտաւքս հանդերձ» (Տե՛ս Մատթ. ԻԶ:17-18): Իսկ Մարկոս եւ Ղուկաս, եւ թէ քանի՛ աշակերտս առաքեաց, ուսուցանեն ասեն. *առաքեաց երկուս յաշակերտացն (Նմմ. Մարկ. ԺԴ:13, Ղուկ. ԻԲ:7): Նաեւ Ղուկաս զանուանսն եւս ասէ, զորոց առաքեացն, ասէ. «Առաքեաց զՊետրոս եւ զՅոհաննէս», այլեւ նշան ետ նոցա եւ ասէ. «Ահա իբրեւ մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի՝ բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տուն, յոր մտանիցէ, եւ ասասջիք ցտանուտէր տանն. «Ո՞ւր են աւթեվանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտաւքս[102] հանդերձ», եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. անդ պատրաստեսջիք» (Տե՛ս Ղուկ. ԻԲ:10-12): Եւ արդ, զի՞նչ յայսցանէ իմանամք, եւ կամ զո՞ր արդեաւք կոչիցէ առաջին աւր: Առաջին աւր՝ զհինգերորդ աւր շաբաթուն ասէ, վասնզի հրամայեաց Աստուած որդոցն Իսրայէլի, թէ «Զեաւթն աւր բաղարջ կերիջիք» (Տե՛ս Ելք. ԺԲ:15), եւ յառաջնումն աւր զենէք զպասեքն Տեառն: *Վասն այնորիկ աշակերտքն աղաչէին զՏէրն գիտել, թէ՝ ո՞ւր կամիցի ուտել

101 Բ արեամբքս:
102 Ա աշակերտաւքն:

զպասեքն, ըստ աւրինացն (Տմմ. Մատթ. ԻԶ:17): Եւ առաքեցան ի նմին հինգ շաբաթու աւուրն: Եւ վասն է՞ր երկու աշակերտք միայն առաքեցան: Պետրոս ծեր գոլով, աւրինակ էր մարգարէիցն, եւ Յովհաննէս երիտասարդ՝ առաքելոցն: Վասնզի ի ձեռն երկոցունց առաքելութեան՝ առաքելոց եւ մարգարէից ազրեցաք ի մահուանէ, եւ դարձաք ի մոլորութենէ եւ մերձեցաք առ Աստուած: Եւ վասն է՞ր զանուն տանուտեառն տանն ծածկեաց Քրիստոս. այլ զայս արար, ոչ թէ վասն աշակերտացն, զոր առաքեացն, այլ վասն Յուդայի, զի մի երթեալ ասասցէ Հրէիցն, թէ ով իցէ նա, յորոյ տունն եմուտ Քրիստոս: Եւ յայսմանէ ամբոխ ինչ եւ խռովութիւն յարուցեն Հրեայքն ի վերայ առնն, եւ խափան արասցեն այնմ, որ հանդերձեալ էր ի վերնատան նորա կատարիլ: Վասն այսմիկ[103], առ ժամանակ մի, ծածկեաց Քրիստոս զանուն առնն: Եւ զի՞նչ պատճառ էր նախապատրաստ լինելոյ՝ զարդարեալ վերնատանն: Այլ քանզի ոչ տայր աւրենքն Աստուծոյ որդւոցն Իսրայէլի արտաքոյ Երուսաղէմի առնել զզատիկն, եւ վասն այսորիկ, ամենայն տունք քաղաքին Երուսաղէմի լցեալ լինէին ի հեռուստ եկելովքն եւ շրջաբնակաւքն Հրէից: Վասն զի, այրն ակն ունէր զմեծ ոմն զմարդ երեւելի ընդունել ի տան իւրում, եւ վասն այնորիկ, զվերնատունն զայն զեղեցկապէս պատրաստեալ, յարինեալ էր ամենայն զարդուք՝ ի պէտս տաւնին, որ եւ այս, ըստ շնորհացն Աստուծոյ, այնպէս պատրաստեալ պահեցաւ ի պէտս սուրբ խորհրդոյն, որ ի նմա կատարելոց էր: Եւ վասն է՞ր ի վերնատան կատարէին խորհուրդքն: Թ-ուի ինձ, յաղագս երկուց պատճառաց. մի՝ զի ուսուցէ, թէ երկնաւոր են խորհուրդքն եւ ոչ երկրաւոր, եւ պատշաճ է ընդունողացն՝ զնոսա մտացն թեւովք բարձրանալ յերկրէ, եւ անձին երկնաւոր զնացս ստանալ: Եւ երկրորդ՝ զի ոչ էր վայելուչ զպաշտաւնն ծածկ[կ]եալ խորհրդոց ի ներքոյ առաջի ամենայն բազմամբոխ մարդկանն կատարել: Այլ ի բարձրագոյնսն առաջի իւրայոցն միայն, եւ կամակցացն ընտրելոց արժան էր: Եւ զինչ ապա այնուհետեւ. «Իբրեւ երեկոյ եղեւ, ասէ, կայր Յիսուս բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն, եւ մինչդեռ ուտեին նոքա, ասէ. «Մի ոմն ի ձենջ մատնելոց է զիս», եւ տրտմեցան յոյժ: Եւ սկսան ասել իւրաքանչիւր ոք ի նոցանէ. «Միթէ ե՞ս իցեմ, Տէր», նա պատասխանի ետ եւ ասէ. «Որ մխեաց ընդ իս զձեռն իւր ի սկաւառակս, նա մատնելոց է զիս» (Տե՛ս Մատթ. ԻԶ:20-24): Իսկ Յոհաննէս այլազունակի իմն ասէ, *եթէ ինքն Քրիստոս եթաց զպատառն եւ ետ Յուդայի (Տմմ. Յովհ. ԺԳ:26), եւ երկոքեանս եղեն ճշմարտապէս: *Եւ զի մխեաց նա զձեռն իւր ընդ Քրիստոսի (Տմմ. Մատթ. ԻԶ:23), *եւ զի եթաց զպատառն եւ ետ նմա (Տմմ. Յովհ. ԺԳ:26): Եւ զայս արար Քրիստոս վասն երկուց իրաց մի. զի ծանուցէ եւ յայտ արասցէ, թէ զիտեր, զոր ինչ լինելոց էր, եւ զի կամաւ գայ ի չարչարանս: Եւ զի քննիչ էր[104] երիկամանց սրտի, եւ յայտնի է ննենգութիւն խորհրդոցն Յուդայի առաջի նորա: Եւ երկրորդ. զի ոչ էր արժան հաղորդել նմա մարմնոյ եւ արեան նորա. նախ ազացուցանէ, թէ նա է, որ մատնելոց է զնա, եւ զի ցուցցէ աշակերտացն յայտնի նշանաւն, թէ ով է, որ զայն զործելոց իցէ: Որ թէպէտ եւ զայսպիսի նշանս ետ աշակերտացն, եւ նոքա ճշմարիտ գիտէին զբանս վարդապետին, եւ յայտ յայսմանէ է, զի իւրաքանչիւր ոք առ անձն իւր կասկածէր, սակայն առ զարմանալն չհաւատալի իմն զբանն համարէին, իբրու, թէ ո՞ր աշակերտ իցէ, որ ընդ նոսին այնչափ նշանաց եւ սքանչելեաց հաղորդեալ իցէ, եւ յայնչափ յանդգնութիւն համարձակիցէ, զի որպէս ինքեանք հեռի էին յայնմ լրբութենէ, նոյն-

103 Ա այսորիկ:

104 Բ է:

պէս եւ զայլոք այնպէս կարծէին: Եւ յետ այնորիկ զի՞նչ եւս արար Քրիստոս: Եւ մինչդեռ ուտէին. «Առ Յիսուս, ասէ, հաց, աւրհնեաց եւ եբեկ եւ ետ աշակերտացն, եւ ասէ. «Առէք կերայք՝ այս է մարմին իմ»: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ եւ ետ նոցա եւ ասէ. «Արբէք ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերա բազմաց հեղու՝ ի թողութիւն մեղաց» (Տե՛ս Մատթ. ԻԶ:26-29), «Զայս արարէք առ իմոյ յիշատակի» (Տե՛ս Ղուկ. ԻԲ:19): «Բայց ասեմ ձեզ, ոչ եւս արբից յայսմհետէ ի բերոյ որթոյ մինչեւ յաւրն յայն, յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հաւր իմոյ», եւ աւրհնեցին, եւ[105] ելին ի լեառն Ձիթենեաց» (Տե՛ս Մատթ. ԻԶ:29-30): Եւ զի՞նչ արդեաւք էր, զոր ուտէին, յորժամ առ Քրիստոս զհացն աւրհնեաց եւ ետ նոցա. զգառն աւրինական, զոր պատրաստեցին առաքեալքն: Եւ կամ որպէս թուի ինձ՝ ի դէպ զոլ, թէ այլ ինչ բազմեցան յուտել յետ աւրինական զառինն, որպէս այլ ոմն այր սուրբ ասաց: Եւ յայտ անտի է, զի աւրէնքն Աստուծոյ յուտն հրամաէին[106] ուտել զգառինն, եւ Քրիստոս ոչ էանց զաւրինաւքն երբեք: Եւ ընդէ՞ր յետ ճաշակելոյ ստուերական զառինն, ապա աւրհնեաց զհացն եւ ետ նոցա ուտել. առ ի ցուցանել, թէ այն աւրինակ էր, եւ այս՝ ճշմարտութիւն: Եւ արժան էր նախ զաւրինակն կատարել, եւ ապա զալ ճշմարտութեան, եւ որպէս ստուերն կցորդ է մարմնոյն, նոյնպէս աւրինակն՝ յաւրինողին: Արդ, կատարեաց նախ զաւրինակն ըստ հին պատուիրանացն, եւ ապա սկիզբն արար նորոյ ուխտին՝ յայտ առնելով, թէ նոյն ինքն է Տէր, եւ տուիչ Հին եւ Նոր Կտակարանաց: Վասն այնորիկ զայն ելից որպէս պատուիրեցաւ նա, եւ զայս ստուգեաց, որպէս խոստացաւ նաեւ յորժամ ուտէին զգառնն. ոչ ասաց, թէ՝ «Այս է մարմին իմ» (Տե՛ս Մատթ. ԻԶ:26), վասն զի աւրինակ էր, այլ յորժամ բազմեցաւ, էառ զհացն, քանզի ճշմարտութիւն էր. աւրհնեաց եւ արար մարմին իւր, եբեկ եւ ետ նոցա, եւ յայտ արար, թէ էանց աւրինակն, եւ ծագեաց ճշմարտութիւն: Եւ ոչ միայն այս, այլ զի նախ աւրհնեաց եւ ապա եբեկ՝ առ ի յուսուցանել զմեզ, թէ այսպէս պարտ է կատարել զսուրբ խորհուրդն: Նախ աւրհնել զհացն, եւ քարոզել ի վերա նորա զամենայն փրկական տնաւրէնութիւնն, եւ ապա բեկանել եւ առնուլ հաւատով՝ ի քաւութիւն մեղաց մերոց: Եւ զի գոհացաւ յետ կատարման խորհրդոյն՝ առ ի խրատել զմեզ, թէ այնպէս պարտ է գոհանալ, յորժամ հաղորդիցիմք սուրբ խորհրդոյն: Եւ ասաց, թէ. «Արբէք ի դմանէ ամենեքեան» (Տե՛ս Մատթ. ԻԶ:27): Եցոյց, եթէ ամենայն հաւատացելոց յամենայն ժամ պարտ է զգուշանալ եւ ապա մերձենալ ի մարմին եւ յարիւնն փրկական: Եւ է՞ր վասն Քրիստոս յետ զգառն ուտելոյ հաղորդեաց զաշակերտսն մարմնոյ եւ արեան իւրոյ[107], իսկ մեք նախքան զկերակուր հաղորդիմք, եւ թէ ոք յայսոսիկ սխալեսցէ[108], պատուհաս կրեսցէ: Վասն զի այն առաջինն աւրինակ էր, զոր կերանն. եւ երկրորդն՝ ճշմարտութիւն, եւ պարտ են, նախ աւրինակին անցանել, եւ ապա զալ, հասանել ճշմարտութեանն: Քանզի ամենայն իրաւք պարտ եւ պատշաճ էր Քրիստոսի՝ զամենայն աւրէնսն կատարել, որպէս եւ ինքն իսկ ասաց, որպէս պատշաճ էր դարձեալ լուծանել եւ յայլ բարձրագոյնս փոխել: Եւ վասն այնորիկ[109] ոչ էր վայելուչ յետ զհրաշափառագոյն խորհուրդն աւանդելոյ եւ հաղորդեցուցանելոյ զաշակերտսն մարմնոյ եւ արեան իւրոյ, դարձեալ անդրէն յաւրինակն դառնալ, եւ զստուերական զառնն ուտել: Նաեւ ոչ եւս տեսա-

105 Բ չիք:
106 Ա համարէին:
107 Ա իւր:
108 Ա սխալ է:
109 Բ այսորիկ:

նեմք, թէ այլ ուրեք երբէք գործեցին առաքեալքն այնպիսի: Եւ մեզ արժան է՝ նոցին զհետ ընթանալ, որ ստուգապէս ի Քրիստոսէ ընկալան զաւրինադրութիւնն, եւ յետ այնորիկ ի Հոգոյն Սրբոյ՝ ի վերնատանն, որով ուսանիմք, թէ չիք ինչ ի մեզ հին կամ ստուերական, այլ ամենայն ինչ նոր եւ ճշմարիտ, եւ ոչ թէ երկրաւոր ինչ կերակուր ունիմք, այլ երկնաւոր: Եւ զի՞նչ հարկ էր, ասեն, հանապազորդ խորհրդոյն այնմիկ, եւ միշտ հաղորդեալն լինել մարմնոյ եւ արեան նորա, զի բաւական է մինն միայն. այո՛յ, հարկ էր արդար եւ կարի քաջ: Զի եթէ զհանապազորդութիւն հաղորդութեան չէր պարգեւեալ, ուստի՞ ճանաչէին զկնի եկեալքն զհրամանսն նորա: Եւ կամ ո՞վ կարէր զոք հաւանեցուցանել վասն այսպիսի հրամանացս պարգեւի, եւ այսպէս դժուարահաւատալի լինէր ճշմարտութիւնն՝ յաղագս բազմաժամանակեայ մոռացութեան: Բայց այժմ, յամենայն ժամ ի մարմին եւ յարիւն նորա մերձենալով, եւ ի վերա ձեռաց մերոց բառնալով, ճշմարտապէս հաւատամք, եթէ զմարմին Աստուծոյ բաշխեմք, եւ ընդ նմա միանամք, *եւ ոսկր յոսկերաց նորա լինիմք, եւ մարմին ի մարմնոյ նորա, որպէս եւ գրեալ է (Նմմ. Ծննդ. Բ:23): Քանզի ոչ եթէ աւրինակ ինչ է կամ նմանութիւն, որ կատարի ի միջի մերում, այլ ճշմարտութիւն: Զի եւ ինքն Քրիստոս այսպէս ասաց, թէ «Այս է ճշմարիտ մարմին իմ եւ արիւն», (Տե՛ս Մատթ. ԺԶ:26-28) որպէս էր մարմին նորա, մինչեւ փակաւին չէր պատարագեալ, որ արդարեւ մեծ եւ սքանչելի խորհուրդս այս, ո՛վ, եղբարք: Եւ յառաջագոյն ուսուցանէ մեզ, թէեւ յետ պատարագելոյն, կենդանի է, եւ զի պատարագեալ էր, յայտ անտի է, զի ուտէին զմարմին նորա եւ ըմպէին զարիւն, եւ զի կենդանի էր, յայտ անտի է, զի ինքն աւրհնեաց զհացն, երեկ եւ ետ նոցա: Եւ զայս զի՞ արար Քրիստոս. առ ի յուսուցանել զնոսա, թէ այնպէս պարտ է առնել եւ նոցա զյիշատակ չարչաչարանաց նորա եւ զմահու: *Նաեւ զառն երկու, ըստ աւրինացն, որ մինն զենեալ լինէր առ դրան խորանին պատարագ՝ վասն մեղաց ժողովրդեանն, եւ միւսն՝ արձակեալ լիներ կենդանի՝ յանապատ (Նմմ. Ղեւտ. ԺԶ), *զայս խորհուրդ աւրինակ էր նոյնպէս եւ ճնճղուկքն երկու. որ մինն զենեալ լինէր պատարագ առաջի Տէառն, եւ միւսն՝ թռուցեալ լինէր յերկինս (Նմմ. Ղեւտ. Ե): Զայս ուսուցանէին, թէեւ զենեալ Քրիստոս՝ պատարագ ընդունելի, եւ կենդանի է ընդունող պատարագի անմահին մեռելոյ վասն մեր, որում փառք յաւիտ[եանս. ամէն]: